ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2010-2012 ԹԹ.

ԸՍՏ ԲԱՆԿԵՐԻ 2010-2012 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ի կատարումն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 11.11.2003թ. թիվ 385 որոշման՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացրել 2010-2012թթ. հեռանկարային զարգացման ծրագրերը, որտեղ ներկայացված են իրենց կողմից մշակված ռազմավարություններն առաջիկա երեք տարիների համար, ինչպես նաև կատարված են հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները:

Երևան - 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2

2009թ. զարգացումները 2

Բանկերի սպասումները միջազգային զարգացումների, ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսաբանկային հատվածի վերաբերյալ՝ ՀՀ առևտրային բանկերի վրա ազդեցության տեսանկյունից 3

II ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 9

III ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ 10

IV ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 2010-2012 ԹԹ. 13

Բանկերի ընդհանուր ռազմավարությունը 13

Ընդհանուր կապիտալ 15

Ներգրավված միջոցներ 16

Տեղաբաշխված միջոցներ 18

Բանկերի գործունեության ծրագրավորվող ֆինանսական արդյունքները 21

Բանկերի կառավարման համակարգ 24

Կադրային քաղաքականություն 27

Մարկետինգային քաղաքականություն 28

Բանկերի «աշխարհագրությունը» 29

V ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 30

VI ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ 32

Կոնցենտրացումը պլանավորվող ժամանակահատվածում 32

VII ԱՄՓՈՓՈՒՄ 34

Հավելված 1. *ՀՀ բանկերի սպասումները Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ*

Հավելված 2. *Բանկային համակարգի փաստացի և կանխատեսված հաշվեկշիռը*

Հավելված 3. *Բանկային համակարգի փաստացի և կանխատեսված եկամուտների ու ծախսերի կառուցվածքը*

Հավելված 4. *Բանկային համակարգի վարկային պորտֆելի փաստացի և կանխատեսված կառուցվածքը*

Հավելված 5. *Բանկային համակարգի կառավարման արդյունավետության միջինացված ցուցանիշներ*

Հավելված 7. *Բանկային համակարգում կոնցենտրացման չափերը*

I ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՓԱՍՏԱՅԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2009թ. զարգացումները

ՀՀ առևտրային բանկերը 2010-2012թթ. ՀՋԾ-ներում առանձնացրել են 2009թ. իրենց գործունեության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցած միջազգային, ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսաբանկային հետևյալ գործոնները[1].

- ***Դեռ 2008թ. տարեվերջից շարունակվող ճգնաժամային իրավիճակ:*** Պայմանավորված միջազգային ֆինանսական շուկաներում տիրող ճգնաժամային իրադրությամբ՝ 2009թ-ը աչքի ընկավ ՀՀ տնտեսության և բիզնես միջավայրի պասիվությամբ, ինչին ՀՀ կառավարությունը որոշեց արձագանքել լայնածավալ հակաճգնաժամային ծրագրերի ակտիվ իրականացմամբ, որոնց արդյունքում արձանագրվեց գործարար միջավայրի և հիպոթեքային շուկայի որոշակի ակտիվացում, և որպես հետևանք՝ արդեն տարեվերջին զգալիորեն բարելավվեցին մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների մեծ մասը:
- ***ՀՀ դրամի արժեզրկում:*** Դոլարային միջոցների ներհոսքի կրճատման և դրանց նկատմամբ պահանջարկի աճի պայմաններում, 2009թ-ի մարտի 3-ին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց ավելի քան 20%-ով, ինչը հանգեցրեց արտարժույթի վերագնահատումից վնասների այն բանկերի մոտ, որոնք ունեին արտարժութային կարճ դիրքեր:
- ***Իրացվելիության ճգնաժամ:*** Իրացվելիության համաշխարհային ճգնաժամի պայմաններում բանկերի մոտ առաջ եկան միջազգային ֆինանսական շուկաներից միջոցների ներգրավման հետ կապված դժվարություններ կամ պայմանների խստացումներ, իսկ դրամային ավանդների՝ դոլարայինի փոխարկման հետևանքով առաջացան իրացվելիության լրացուցիչ սահմանափակումներ: Մյուս կողմից, միջազգային շուկաներում տեղի ունեցած անկումը բանկերի գործունեության վրա ունեցավ նաև անուղղակի՝ ՀՀ տնտեսությամբ միջնորդավորված, ազդեցություն՝ կրճատելով բանկերի կորպորատիվ հաճախորդների որոշ խմբերի շրջանառության ծավալները:
- ***Միջազգային շուկաներում տոկոսադրույքների նվազում:*** Միջազգային ֆինանսական ճգնաժամից ածանցված՝ մի շարք զարգացած երկրների կենտրոնական բանկերի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը հանգեցրել է տոկոսադրույքների (այդ թվում՝ LIBOR և EURIBOR տոկոսադրույքների) համընդհանուր իջեցման. արդյունքում նվազել է նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից միջազգային կազմակերպություններից LIBOR և EURIBOR տոկոսադրույքներով ներգրավված միջոցների ծախսատարությունը, ինչի արդյունքում որոշ բանկեր կարողացել են մեծացնել զուտ տոկոսային մարժան: Միաժամանակ, միջազգային շուկաներում տոկոսադրույքների նվազումը բացասաբար է անդրադարձել միջազգային շուկաներում միջոցների տեղաբաշխման քաղաքականության վրա:
- ***ՀՀ տնտեսական աճի և մասնավոր տրանսֆերտների նվազում:*** Համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցած հետընթացը, գործազրկության մակարդակի աճը հանգեցրին դեպի ՀՀ հոսող մասնավոր փոխանցումների ծավալների ավելի քան 30%-ով կրճատման և ՀՀ տնտեսության ավելի քան 14% անկման: Դա հանգեցրեց ֆիզիկական անձանց և տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական վիճակի վատթարացման, ինչը իր

[1] Հատկանշական է, որ ՀՀ առևտրային բանկերը, առանձնացնելով իրենց գործունեության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցած գործոնները, հաճախ չեն նշում, թե կոնկրետ իրենց վրա այդ գործոնները ինչպես են ազդել, ինչը դժվարացնում է առանձին բանկերի վրա ազդող գործոնների առանձնացումը:

բացասական ազդեցությունն ունեցավ վարկերի որակի վրա: Մյուս կողմից էլ, կրճատվեցին բանկերի՝ միջնորդային ծառայություններից ստացվող ոչ տոկոսային եկամուտները, նվազեց վարկային միջոցների պահանջարկը և բարձրացավ վարկային ռիսկը՝ խոչընդոտելով վարկային պորտֆելի աճին:

- ***Բանկային մրցակցության սրացում:*** Իրացվելիության համաշխարհային ճգնաժամի պայմաններում՝ ՀՀ բանկերի ճնշող մեծամասնությունը դժվարություններ ունեցավ միջազգային ֆինանսական շուկաներ դուրս գալու հարցում, և տնտեսությունից միջոցների ներգրավման ծավալների մեծացման նպատակով սրվեց մրցակցությունը ավանդների ներգրավման շուկայում, ինչը, զուգակցվելով ակնկալվող գնաճի հետ, հանգեցրեց ավանդների տոկոսադրույքների բարձրացման և տոկասային ծախսերի ավելացման: Միաժամանակ որոշ բանկերի հաջողվեց ապահովել օտարերկրյա էժան ռեսուրսների բավականաչափ ներհոսք, կապիտալի շուկայում որոշ բանկեր հայտարարեցին սեփական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ, իսկ, մյուս կողմից, տնտեսության իրական հատվածում առկա ճգնաժամի պայմաններում՝ նվազեց վարկերի պահանջարկը: Բանկային համակարգում նման միտումների զարգացումը, ինչպես նաև Ազգային հիփոթեքային ընկերության գործունեության ծավալումն ու կառավարության աջակցությամբ իրականացված փոքր ու միջին բիզնեսի վարկավորման ծրագրերը ստեղծեցին լուրջ մրցակցային պայքար՝ ստիպելով բանկերին միջոցների տեղաբաշխման նպատակով իջեցնել վարկավորման տոկոսադրույքները, յուրացնել բանկային նոր ծառայությունների շուկաներ: Բացի դրանից, ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող տոկոսադրույքների իջեցման քաղաքականությունը ևս իր ազդեցությունն է ունեցել բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների իջեցման վրա: Ավանդային տոկոսադրույքների բարձրացումը՝ մի կողմից, և վարկավորման տոկոսադրույքների նվազումը՝ մյուս կողմից, նվազեցրել են բանկերի տոկոսային մարժան: Բացի դրանից, եղան բանկեր, որոնք այլ բանկերի կողմից վարվող ագրեսիվ վարկային քաղաքականության արդյունքում զիջեցին իրենց դիրքերը վարկավորման որոշ ոլորտներում:
- ***Բանկերի գործունեության կարգավորման դաշտում փոփոխություններ:*** Բանկերի գործունեության կարգավորման և ռիսկերի կառավարման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ հատուկ տնտեսական նորմատիվի սահմանումը՝ կապված արտարժութային դիրքերի սահմանափակման հետ, թեև, որոշ բանկեր, նորմատիվի պահանջները պահպանելու նպատակով, ստիպված եղան որոշ ժամանակ արտարժութային գործարքներն իրականացնել շուկայականից ցածր փոխարժեքով, որի արդյունքում կրճատվեցին արտարժութային գործարքներից ստացվող եկամուտները:

<u>Բանկերի սպասումները միջազգային զարգացումների, ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսաբանկային հատվածի վերաբերյալ՝ ՀՀ առևտրային բանկերի վրա ազդեցության տեսանկյունից:</u>

(կանխատեսված ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Հավելված 1-ում)

Կանխատեսվող ժամանակաշրջանի համար ՀՀ առևտրային բանկերը՝ որպես արտաքին միջավայրից, ներքին տնտեսությունից և ֆինանսական հատվածից բխող և իրենց գործունեության վրա ազդեցություն ունեցող առավել նշանակալի գործոններից առանձնացրել են.

Միջազգային գործոններ.

- *Համաշխարհային տնտեսության դանդաղացված, բայց աստիճանական վերականգնում* դրանից բխող տնտեսական հետևանքներով՝ դրամական փոխանցումների ծավալների աճ և օտարերկրյա ներդրումների ծավալների վերականգնում, միջազգային ինդեքսների, հումքային և պարենային գրեթե բոլոր ապրանքների նկատմամբ պահանջարկի կայունացում ու դրանց գների աճ, արտաքին միջավայրից փոխանցվող գնաճային ճնշումներ և այլն:
- *Միջազգային իրացվելիության ճգնաժամ:* Միջազգային ֆինանսական շուկաներում շարունակվող իրացվելիության ճգնաժամը կարող է բանկերի համար դժվարություններ ստեղծել նոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման տեսանկյունից: Միևնույն ժամանակ կան նաև բանկեր, որոնք կանխատեսում են միջազգային ֆինանսական կառույցներից միջոցների ներգրավման քաղաքականության շարունակականություն, ինչպես նաև նախկինում արդեն իսկ ներգրաված միջոցների հետագա օգտագործում/տեղաբաշխում:
- *Միջազգային շուկաներում տոկոսադրույքների մակարդակ.* միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների (այդ թվում՝ LIBOR տոկոսադրույքի) 2009թ. հաստատված ցածր մակարդակը կանխատեսվում է, որ կպահպանվի նաև 2010թ.՝ նպաստելով, մի կողմից, բանկերի տոկոսային ծախսերի կրճատմանը, մյուս կողմից էլ՝ միջազգային շուկաներում/օտարերկրյա ֆինանսական ինստիտուտներում տեղաբաշխված միջոցների եկամտաբերության նվազմանը: Այնուամենայնիվ, որոշ բանկեր կանխատեսում են միջազգային տոկոսադրույքների որոշակի բարձրացում:
- *ԱՄՆ դոլարի փոխարժեքը այլ արժույթների նկատմամբ.* որոշ բանկերի կողմից կանխատեսվում է, որ ԱՄՆ դոլարի կամրապնդվի այլ արժույթների և մասնավորապես՝ ՀՀ դրամի նկատմամբ, ինչն էլ բանկերի համար կարող է հանդես գալ որպես արտարժութային ռիսկի լրացուցիչ աղբյուր: ԱՄՆ դոլարի դիրքերի որոշակի ամրապնդումը կպայմանավորվի Եվրոմիության տնտեսության համեմատ ԱՄՆ տնտեսության ավելի արագ վերականգնումով: Ի հակադրություն սրան՝ եղել են նաև բանկեր, որոնք կանխատեսել են, որ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորմանը նպաստող գործոններն առավել նշանակալի կլինեն՝ պայմանավորված նախորդ տարում իրականացված ընդլայնողական քաղաքականությունների ազդեցությունների արտահայտմամբ ընթացիկ տարում:

- *Մասնավոր տրանսֆերտներ.* Համաշխարհային տնտեսության աշխուժացումը իր ազդեցությունը կունենա նաև մեր տնտեսության վրա՝ հիմնականում տրանսֆերտների և կապիտալի ներհոսքի կանխատեսվող վերականգնմամբ պայմանավորված, ինչի շնորհիվ կաճեն մի կողմից՝ բնակչության եկամուտները, մյուս կողմից՝ բանկերի միջոցով կատարվող փոխանցումներից ստացվող միջնորդավճարները: Կան նաև հակառակ կանխատեսումներ: Այսպես, ԱՄՆ և ՌԴ տնտեսական ճգնաժամերի հետևանքով մասնավոր տրանսֆերտների նվազումը բացասական ազդեցություն կունենա բանկերի վրա՝ բանկերի միջոցով կատարվող փոխանցումներից միջնորդավճարների նվազման տեսանկյունից:

2010-2012թթ. համար բանկերը կանխատեսել են ՀՀ տնտեսության և ֆինանսաբանկային հատվածում հետևյալ զարգացումները.

- *ՀՀ տնտեսության կայունացում:* Բոլոր բանկերն էլ կանխատեսում են, որ առաջիկա երեք տարիներին կդիտվի տնտեսության որոշակի աճ, սակայն տնտեսության ընդհանուր աշխուժացման վերաբերյալ տրված գնահատականները տարբեր են: Այսպես, կան բանկեր, որոնք կանխատեսում են տնտեսական ակտիվության վերականգնում, ինչը իր ազդեցությունը կունենա բնակչության եկամուտների աճի վրա: Տրանսֆերտների աճը և տնտեսական աճը կնպաստեն ֆինանսական միջնորդության ավելացմանը, բանկային ծառայությունների՝ սպառողական, առևտրային վարկերի, պլաստիկ քարտերի, անկանխիկ վճարումների նկատմամբ պահանջարկի, ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին ժամկետայնության ավելացմանը, ինչպես նաև բանկերի վարկային պորտֆելի որակի բարելավմանը: Կան նաև պակաս լավատեսական կանխատեսումներ՝ մասնավորապես, տնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած տնտեսության լճացման գործընթացները կշարունակվեն առաջիկա երեք տարիներին, զգալիորեն կդանդաղեն աճի տեմպերը շինարարության և դրա հետ փոխկապակցված ճյուղերում, և այդ հանգամանքներն էական բացասական ազդեցություն կունենան զբաղվածության և բնակչության եկամուտների մակարդակի վրա:
- *ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեք:* Դեռևս իրատեսական է համարվում ՀՀ դրամի փոխարժեքի որոշ չափով հնարավոր արժեզրկումը, որը թերևս նպաստավոր պայմաններ կստեղծի արտահանման աճի՝ դրա հաշվին արտահանվող ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացման և երկարաժամկետ հատվածում ներմուծման ծավալի կրճատման վրա, բարելավելով երկրի վճարային հաշվեկշիռը: Միևնույն ժամանակ, տվյալ պարագայում չի կարելի բացառել նաև գնաճային «շոկ»-ի առաջացման հավանականությունը: 2010թ. համար բանկերի կանխատեսումները ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի վերաբերյալ ընկնում են 360-455 միջակայքում (միջինը 394), սակայն բանկերի մեծամասնությունը հիմնականում կանխատեսել է 380-400 միջակայք: Հարկ է նշել, որ որոշ բանկերի կանխատեսումների համաձայն՝ դրամի կայունացումը կարող է մեղմացնել դոլարիզացիայի առկա մակարդակը:
- *ՀՀ տնտեսության դոլարայնացում*: Դրամի հետագա արժեզրկման սպասումները դեռևս կպահպանվեն հասարակության մոտ, որի արդյունքում խնայողությունների մեջ կշարունակի բարձր տեսակարար կշիռ ունենալ արտարժութային խնայողությունների մասը. արդյունքում բանկերի առաջ կշարունակի ծառանալ դրամային ռեսուրսների ներգրավման հարցը՝ եթե այդ հարցում նրանց չշարունակեն աջակցել կառավարությունը և ՀՀ ԿԲ-ն՝ դրամային ռեսուրսների տրամադրման ճնով (որոշակի ծրագրերի շրջանակներում ենթավարկեր տրամադրելու նպատակով): Մի կողմից, ՀՀ դրամի վերջին տարում արձանագրված աննախադեպ արժեզրկման արդյունքում վերջինիս նկատմամբ վստահության իրական նվազումը նպաստելու է արտարժույթի, մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ սպասվածից բարձր պահանջարկի գոյացմանը: Սակայն մյուս կողմից, ապադոլարայնացմանն ուղղված միջոցառումների իրագործումը որոշ չափով նպաստելու է դոլարայնացման տեմպի դանդաղմանը, ազգային արժույթի ամրացմանն ու արտարժույթի, մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի ստվերային շրջանառության կրճատմանը:
- *Գնաճ:* Համաշխարհային տնտեսության վերականգնմամբ պայմանավորված միջազգային շուկաներում հումքային և պարենային ապրանքների գների աճը մեր տնտեսությունում արտաքին միջավայրից փոխանցվող գնաճային ճնշումներ

կառաջացնի: Բացի այդ, կան նաև որոշակի գնաճային ռիսկեր կապված 2010թ-ի ապրիլ ամսից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների ավելացման հետ: Դա կարող է հանգեցնել այլ ապրանքատեսակների գների թանկացման՝ որպես ինքնարժեքի տարր: 2010թ. համար բանկերի կողմից կանխատեսվող գնաճը տատանվում է 4%-ից 7.5% միջակայքում: 2010-2012թթ. ՀՋԾ-ներով բանկերի կողմից գնաճի մակարդակի միջին կանխատեսումը վերանայվել է մինչև 5.5%.

- *Դրամավարկային քաղաքականություն:* Բանկերի մի մասը կանխատեսում է, որ պայմանավորված ներքին տնտեսության վերականգնման տեմպերով՝ ՀՀ կենտրոնական բանկը ինչպես և նախորդ տարի կշարունակի իրականացնել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն՝ պահպանել վերաֆինանսավորման տոկոսադրույքի ցածր մակարդակ՝ նպաստելու համար տնտեսության վերականգնման խթանմանը, իսկ ըստ մյուս մասի կանխատեսումների՝ պայմանավորված գնաճային ճնշումների առաջացման հավանականությամբ՝ ՀՀ ԿԲ-ն որոշակիորեն կխստացնի դրամավարկային քաղաքականության իրականացման պայմանները՝ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ գնաճի զարգացումներին համահունչ, գնաճի նպատակային թիրախը ապահովելու նպատակով, ինչն էլ իր հերթին կհանգեցնի բանկերի կողմից իրացվելի միջոցների ներգրավման ծախսատարության աճին և վարկավորման ծավալների կրճատմանը:

- *Առևտրային հաշվեկշիռ:* Բյուջեի մեծ պակասուրդի պահպանումը և մասնավոր ծախսումների ակնկալվող աճը որոշակիորեն խթանում են ներմուծումը՝ դանդաղեցնելով վերջիններիս արագ ճշգրտումը: 2010թ. ընթացքում ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային ծավալների աճը կարձանագրվի 8-10% միջակայքում, իսկ իրական ծավալների աճը կկազմի 2 - 4%: Նշված զարգացումների արդյունքում 2010թ. ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը նախկին կանխատեսումների համեմատ կվատանա և կգտնվի 14-16%-ի միջակայքում, ինչը հիմնականում կպայմանավորվի ներմուծման մեծ ծավալների պահպանմամբ: Ընդհանուր առմամբ բանկերը կանխատեսում են թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ծավալների աճ:

- *Քաղաքական իրավիճակ*: Տարածաշրջանի երկրներում այս տարի սպասվում է, որ կպահպանվի կայուն քաղաքական իրավիճակ: Որոշ բանկեր նշում են նաև հայ-թուրքական սահմանի հավանական բացման փաստը՝ որպես երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի վրա ազդող գործոն:

- *Պետական բյուջեի պակասուրդ:* Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշի կանխատեսումները տատանվել են -4.0%-ից 7.0% միջակայքում:

- *Վարկային շուկա:* Պլանավորվող ժամանակահատվածում որոշ բանկեր կանխատեսում են, որ տնտեսական ճգնաժամի ազդեցության ներքո դեռևս կշարունակի համեմատաբար ցածր լինել գործող բիզնեսների վարկունակությունը և վարկային պահանջարկը, անշարժ գույքի գների անորոշությունն էլ՝ իր հերթին, կստիպի բանկերին լինել ավելի զգույշ անշարժ գույքի գրավադրման ժամանակ, որը կդանդաղեցնի վարկավորման ծավալների աճը: Կան նաև նշված կանխատեսումների համեմատ ավելի լավատեսական կանխատեսումներ: 2010թ. ընթացքում որոշ բանկերի կողմից ՀՀ ֆինանսաբանկային համակարգում ներգրավված միջոցների տեղաբաշխման գործընթացներում սպասվում է և՛ բանկերի, և՛ վարկային կազմակերպությունների որոշակի աշխուժացում՝ ինչպես սեփական ուժերով այնպես էլ պետության աջակցությամբ: Նախորդ տարում ՀՀ կառավարության նախաձեռնությամբ

արտասահմանից ներգրաված վարկային և դրամաշնորհային միջոցները հնարավորություն կտան ՀՀ բանկերին մեծացնել իրենց վարկային պորտֆելի ծավալները: Սպասվող տնտեսական աճը և համախառն պահանջարկի աճը բարենպաստ միջավայր կստեղծեն բանկային համակարգի համար: Ակնկալվում է, որ բանկային համակարգի ընդհանուր վարկերն ու ավանդները կաճեն համապատասխանաբար 30% և 40%: Կանխատեսվում է հատկապես սպառողական վարկավորման ծավալների աճ: Ֆինանսական համակարգի կողմից 2010թ. տնտեսության վարկավորումը տեղի կունենա հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ծրագրերի իրագործման և, մասամբ էլ՝ հիփոթեքային շուկայի աշխուժացմանն ուղղված միջոցների տրամադրման հաշվին: 2010թ. Եվրոմիության երկրների և Ռուսաստանի Դաշնության տնտեսությունների սպասվող կայունացումը և աճը, կնպաստեն արտահանման և ներմուծման ծավալների ավելացմանը Հայաստանի և այդ երկրների միջև: Պայմանավորված վերը նշվածով՝ նախատեսվում է բանկերի խոշոր հաճախորդների գործունեության ակտիվացում, այն է՝ հաշիվների մնացորդների շրջանառության աճ, վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի ավելացում:

- *ՀՀ ֆինանսական շուկայում տոկոսադրույքների մակարդակ:* Ներգրավման, և տեղաբաշխման տոկոսադրույքների վերաբերյալ կան մի շարք տարբեր կանխատեսումներ: Այսպես, 2010 թվականի ընթացքում ֆինանսական շուկայում ներգրավման և տեղաբաշխման, տոկոսադրույքները հիմնականում կմնան անփոփոխ: Որոշ բանկերի կողմից սպասվում է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ միջոցների ներգրավման և վարկավորման տոկոսադրույքների անկում: Արտարժութային միջոցների ներգրավման նկատմամբ բանկերի կողմից սահմանված տոկոսադրույքները կարող են նվազել, և կնվազեն նաև արտարժույթային վարկային միջոցների նկատմամբ սահմանված տոկոսադրույքները: Միաժամանակ հարկ է նշել, որ հատկապես դրամային ավանդների տոկոսադրույքները կունենան առավել դանդաղ նվազման միտում: Իսկ բանկերի մի մասն էլ կանխատեսում է ծրագրվող ժամանակաշրջանում վարկերի և ավանդների տոկոսադրույքների բարձրացում: 2010թ. համար բանկերի կանխատեսումները ժամկետային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տատանվել են 5.0% - 11.0% միջակայքում (միջինը՝ 8.4%), իսկ վարկավորման տոկոսադրույքների կանխատեսումները տատանվել են 13.0% - 23.0% միջակայքում (միջինը՝ 16.4%):

- *ՀՀ պետական պարտատոմսերի շուկա:* Պետական պարտատոմսերի միջին եկամտաբերության կանխատեսումները 2010թ. համար տատանվել են 6% - 12.8% միջակայքում, իսկ բանկային համակարգի միջին կանխատեսումը կազմել է 10.0%: Պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալների կանխատեսումները զգալիորեն տատանվել են ըստ առանձին բանկերի՝ 2010թ. համար՝ 30.0-187.0 մլրդ դրամ միջակայքում (միջինը կազմել է 91.1 մլրդ դրամ):

- *Կորպորատիվ արժեթղթերի շուկա:* Կանխատեսվում է, որ ՀՀ-ում կորպորատիվ պարտատոմսերի թողարկման գործընթացը կխորանա՝ բանկերի համար ստեղծելով ներդրումային նոր հնարավորություններ: 2010 թվականի ընթացքում, կանխատեսվում է արժեթղթերի եկամտաբերության 1.0 տոկոսային կետով տատանում:

- *Անշարժ գույքի գների նվազում:* Անշարժ գույքի շուկայում գների նվազումը կարող է որոշ բանկերի մոտ առաջացնել վարկերի մեծության համեմատ ապահովվածության նվազման և վարկերի որակի վատթարացման միտումներ:

- *ՀՀ ֆինանսական համակարգում ներդրված և ներդրվող նոր ինստիտուտների գործունեություն:* Ներդրումային շուկայում բանկերի համար էական նշանակություն կարող են ունենալ կենսաթոշակային ռեֆորմները և ապահովագրական շուկայի փոփոխությունները «երկար փողերի» ձևավորման տեսանկյունից: Ավանդների երաշխավորման համակարգի ենթադրվող հզորացումը, երաշխավորվող գումարների սահմանաչափի մեծացումը կնպաստեն ավանդների հավաքագրման ընդլայնմանը, ֆինանսական ինստիտուտների նկատմամբ հասարակության ունեցած վստահության բարձրացմանը:

- *Օրենսդրական դաշտ:* Ըստ բանկերի կանխատեսումների տնտեսության վրա դրական ազդեցություն կունենան հետևյալ օրենսդրական փոփոխությունները՝ 300 մլն դրամը գերազանցող ներմուծման դեպքում ԱԱՀ-ի երեք տարով հետաձգումը, ԱԱՀ-ի ամսական հաշվետվության շեմի բարձրացումը 100 մլն դրամի՝ նախկին 60 մլն դրամի փոխարեն, ինչպես նաև հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացումը: ՀՀ Կառավարության որոշմամբ 2009թ-ի հունիսի 1-ից մինչև 2011թ-ի հունվարի 1-ը 70մլն դրամը չգերազանցող շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները տեսչական ստուգման չեն ենթարկվի: Այս որոշումը անշուշտ դրական ազդեցություն կունենա փոքր և միջին բիզնեսի զարգացման վրա, որտեղ բանկերը պլանավորում են կատարել վարկային ներդրումներ: ՀՀ կենտրոնական բանկի կողմից շրջանառության մեջ է դրվել հնգամյա հաշվային պլանի և միջազգային հաշվապահական ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու նախագիծը: Ակնկալվում է, որ նախագիծը ուժի մեջ կմտնի 2011 թվականից, ինչը զգալի մարդկային և ժամանակային ռեսուրսներ կպահանջի և հաշվապահության, և հաշվետվությունների գծով սահուն փոփոխություն ապահովելու համար:
  Կանխատեսվում է պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի ընդունման հավանականություն, ինչպես նաև բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման կարգի փոփոխություն:

- *ՀՀ բանկային համակարգում մրցակցություն:* Որոշ բանկերի կանխատեսմամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից միջոցների ներգրավման հետ կապված դժվարությունները կհանգեցնեն շուկայում մրցակցության թուլացմանը: Միաժամանակ, բանկերի մյուս մասը կանխատեսում է մրցակցության սրացում՝ հատկապես ֆինանսական միջոցների ներգրավման, ինչպես նաև սպառողական վարկերի և իրավաբանական անձանց վարկավորման, ոչ տոկոսային եկամուտներ բերող ծառայությունների շուկաներում, կանխատեսվում են բանկերի խոշորացումներ, վարկային կազմակերպությունների վերակազմավորումներ բանկերի:

Ամփոփելով ՀՀ բանկերի կանխատեսումները արտաքին հատվածի զարգացումների վերաբերյալ՝ նշենք, որ ընդհանուր առմամբ առաջիկա տարում՝ նախորդ տարվա համեմատ կանխատեսվում է ՀՀ տնտեսության աշխուժացում և դրանից ածանցված ՀՀ ֆինանսական համակարգում տեղի ունեցող դրական զարգացումներ:

II ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2010-2012թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով ՀՀ առևտրային բանկերն իրենց նպատակները հիմնականում ուղղել են միջազգային ֆինանսական ճգնաժամի հետևանքների չեզոքացմանը և իրենց գործունեության ծավալների ընդլայնմանը՝ սահմանելով հետևյալները.

- ակտիվների/ վարկային պորտֆելի աճ
- ակտիվների/վարկային պորտֆելի որակի ապահովում
- կապիտալի աճ
- մասնաճյուղային ցանցի ընդլայնում
- ներգրավված միջոցների աճ (այդ թվում՝ ավանդների հաշվին, միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցների հաշվին, սեփական պարտատոմսերի թողարկման հաշվին)
- որևէ հատվածում կամ որևէ ցուցանիշով առաջատար դիրքերի գրավում/ամրապնդում/պահպանում
- շահութաբերության նպատակային ցուցանիշների ապահովում/պահպանում
- պլաստիկ քարտերի թողարկման ծավալների աճ, տեղադրված բանկոմատների և POS-տերմինալների քանակի մեծացում ու աշխարհագրության ընդլայնում
- փոխանցումների ծավալի և քանակի ավելացում
- մատուցվող ծառայությունների ու առաջարկվող պրոդուկտների ցանկի/ծավալների ընդլայնում
- հաճախորդների շրջանակների ընդլայնում
- բաժնետոմսերի (բաժնետիրական կապիտալի) շուկայական արժեքի աճի ապահովում
- տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացում
- ֆինանսական շուկայում նոր սեգմենտների գրավում
- համագործակցություն/համագործակցության ընդլայնում միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ
- սպասարկման որակի բարձրացում
- որակի միջազգային ստանդարտի սերտիֆիկատի (ISO 9001:2000) և միջազգային վարկանշային ընկերության կողմից վարկանիշի ստացում
- ներքին հսկողության համակարգերի կատարելագործում
- կադրերի որակի և կառավարման բարելավում
- ակտիվների արդյունավետության բարձրացում
- գործունեության արդյունավետության բարձրացում
- մշակել և վարկավորման գործընթացներում աստիճանաբար ներդնել սքորինգային համակարգ
- տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ժամկետային ակտիվների և պարտավորությունների բացասական ճեղքվածքի նվազեցումը
- ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործում
- ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի նվազումը
- ավելացնել ոչ տոկոսային եկամուտները՝ մասնավորապես շեշտը դնելով միջնորդավճարների տեսքով ստացվող եկամուտների ավելացման վրա

III ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

2009թ. ՀՀ առևտրային բանկերը հիմնականում կատարել են 2009-2011թթ. ՀՋԾ-ներով նախատեսված խնդիրները: Հարկ է նշել, սակայն, որ հաճախ բանկերի նպատակների և խնդիրների կատարողականի գնահատումն անհնար է դառնում՝ վերջիններիս ոչ չափելի լինելու պատճառով:

Ստորև ներկայացված է 2009թ. փաստացի ցուցանիշների շեղումները 2009-2011թթ. ՀՋԾ-ներով ծրագրված ցուցանիշներից.

	31.12.2009թ. դրությամբ-փաստացի (հազ. դրամ)	31.12.2009թ. համար կանխատեսված (հազ. դրամ)	Շեղում ծրագրվածից (հազ. դրամ)	Շեղում ծրագրվածից (%)
ԱԿՏԻՎՆԵՐ				
1. Կանխիկ դրամական միջոցներ	68 476 239	60 882 761	7 593 478	12%
2. Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում և բանկերում	279 558 189	196 311 813	83 246 376	42%
3. Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտներ և վարկեր	56 204 951	15 023 695	41 181 256	274%
4. Վարկեր տնտեսությանը	684 817 734	670 511 888	14 305 846	2%
5. Պետական արժեթղթեր	112 755 935	99 448 775	13 307 160	13%
6. Այլ արժեթղթեր	6 253 745	4 669 076	1 584 669	34%
7. Լիզինգ և ֆակտորինգ	7 133 496	8 060 510	(927 015)	-12%
8. Հիմնական միջոցներ	70 435 052	68 297 106	2 137 946	3%
9. Այլ ակտիվներ	94 240 854	38 460 654	55 780 200	145%
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ	**1 379 876 194**	**1 161 666 278**	**218 209 916**	**19%**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1. Թղթակցային հաշիվներ	13 644 913	11 138 020	2 506 893	23%
2. Ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ և հաշիվներ	90 638 015	69 535 781	21 102 234	30%
3. Իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ միջոցներ և հաշիվներ	167 538 499	141 512 376	26 026 123	18%
4. Պարտավորություններ գանձապետարանի նկատմամբ	59 490 115	20 499 053	38 991 062	190%
5. Բանկերից և ՀՀ ԿԲ-ից ներգրավված ավանդներ և վարկեր	174 956 291	146 362 764	28 593 527	20%
6. Այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված ավանդներ և վարկեր	80 891 638	74 425 682	6 465 956	9%
7. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ	249 500 633	232 668 231	16 832 402	7%
8. Իրավաբանական անձանց և հիմնարկների ժամկետային ավանդներ	128 000 663	114 741 695	13 258 967	12%
9. Այլ պարտավորություններ	137 444 973	82 951 965	54 493 007	66%
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**1 102 105 739**	**893 835 567**	**208 270 172**	**23%**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	**277 770 456**	**267 830 710**	**9 939 747**	**4%**

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգի ակտիվների 2009թ. փաստացի ցուցանիշները կանխատեսվածի համեմատ գերակատարվել են 19%-ով կամ 218.2 մլրդ դրամով, պարտավորությունները գերակատարվել են 23%-ով կամ 208.3 մլրդ դրամով, իսկ կապիտալը՝ 4%-ով կամ 9.9 մլրդ դրամով: Ընդ որում, ակտիվների նախանշված մեծության գերակատարումը հիմնականում պայմանավորված է ՀՀ ԿԲ-ում և բանկերում թղթակցային հաշիվների և բանկերում ու այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտների և վարկերի

ծրագրված մեծությունից շեղումներով՝ համապատասխանաբար 83.3 մլրդ դրամով (կամ 42%-ով) և 41.2 մլրդ դրամով (կամ 274%-ով):

Պարտավորությունների ծրագրված ցուցանիշից շեղման հիմնական պատճառը ցպահանջ ավանդների և գանձապետարանի նկատմամբ պարտավորությունների նախանշված ցուցանիշների գերակատարումն է՝ համապատասխանաբար 47.1 մլրդ դրամով (կամ 22%-ով) և 39 մլրդ դրամով (կամ 190%-ով):

ՀՀ առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կատարողականն ունի հետևյալ տեսքը.

	31.12.2009թ. դրությամբ- փաստացի (հազ. դրամ)	31.12.2009թ. համար կանխատեսված (հազ. դրամ)	Փաստացի - կանխատեսված	Շեղում ծրագրվածից (%)
Տոկոսային եկամուտներ	114 782 765	117 265 632	(2 482 867)	-2%
Տոկոսային ծախսեր	52 914 988	48 943 054	3 971 934	8%
Զուտ տոկոսային եկամուտներ	*61 867 777*	*68 322 578*	*(6 454 801)*	*-9%*
Ոչ տոկոսային եկամուտներ	33 814 329	34 201 760	(387 431)	-1%
Ոչ տոկոսային ծախսեր	61 666 283	66 156 126	(4 489 843)	-7%
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	*(27 851 953)*	*(31 954 366)*	*4 102 412*	*-13%*
Զուտ մասհանումներ	*13 166 513*	*17 070 756*	*(3 904 243)*	*-23%*
Զուտ շահույթ	**8 420 889**	**14 973 393**	**(6 552 504)**	**-44%**

ROA	**0.8%**	**1.4%**	**-0.6%**	
ROE	**3.6%**	**6.2%**	**-2.6%**	

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգի 2009թ. զուտ շահույթը ծրագրված ցուցանիշից փոքր է եղել 44%-ով կամ 6.5 մլրդ դրամով: Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նույնպես փոքր են եղել նախանշված ցուցանիշներից, այսպես՝ ըստ կապիտալի շահութաբերությունը ծրագրվածից փոքր է եղել 2.6 տոկոսային կետով, իսկ ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը՝ կանխատեսվածից շեղվել է ընդամենը 0.6 տոկոսային կետով:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ առևտրային բանկերը որպես 2009թ. փաստացի ցուցանիշների՝ ծրագրված ցուցանիշներից շեղման հիմնական պատճառներ առանձնացնում են հետևյալ գործոնները՝

- միջազգային ֆինանսական ճգնաժամից ածանցված ՀՀ տնտեսական ճգնաժամի հետևանքով վարկային պարտֆելում դասակարգված վարկերի տեսակարար կշռի ավելացում, հետևաբար զգուշավոր վարկավորման քաղաքականության որդեգրում
- ճգնաժամի հետևանքով շուկայի պասիվություն
- դրամով արտահայտված ռեսուրսների բացակայությունը և արտարժութային դիրքը փակելու անհրաժեշտությունը
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացված լրացուցիչ իրացվելիություն
- միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում իրացվելիության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտություն
- պլանավորման փորձի պակասությունը

- շուկայական իրավիճակի փոփոխությունը, բանկերի կողմից չնախատեսված գործողությունների իրականացումը
- ՀՀ դրամի արժեզրկումը
- խիստ մրցակցությունը

IV ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 2010-2012 ԹԹ.

<u>Բանկերի ընդհանուր ռազմավարությունը</u>

ՀՀ առևտրային բանկերի 2010-2012թթ. ՀՋԾ-ներով արտաքին միջավայրի և խնդիրների կատարողականի վերլուծությունների հիման վրա առանձնացված բանկերի ուժեղ/թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները, ինչպես նաև դրանց համադրման արդյունքում բանկերի որդեգրած ընդհանուր ռազմավարությունները ներկայացված են SWOT մատրիցայի տեսքով.

	Հնարավորություններ	***Սպառնալիքներ***
	1. Ֆինանսական համակարգի շարունակական զարգացման հեռանկար/միտումներ 2. Միջազգային շուկաներում տոկոսադրույքների ցածր մակարդակի պահպանում/միջազգային կառույցներից էժան միջոցների ներգրավում 3. ԱՊՀ երկրների տնտեսությունների աշխուժացում 4. Արտարժութային փոխարժեքի կայունություն 5. Ստվերային տնտեսության դեմ պայքարի պետական քաղաքականություն 6. Տնտեսության խթանման և սոցիալական բարեփոխման պետական քաղաքականություն և տարատեսակ ծրագրերի իրականացում 7. Միջազգային կազմակերպությունների կողմից պետությանը ֆինանսական աջակցություն/ միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության հնարավորություն 8. Մրցակցության թուլացում 9. Բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ, չբավարարված պահանջարկի առկայություն, ժամանակակից բանկային ծառայությունների ընդլայնում և տարածում 10. ՀՀ օրենսդրական դաշտի բարեփոխում, ֆինանսական ենթակառուցվածքների և ֆինանսական շուկաների զարգացում 11. ՀՀ տնտեսության ակտիվացում, բնակչության եկամուտների, տրանսֆերտների/դրամական հոսքերի, արտահանման աճ 12. Արտաքին ապրանքաշրջանառության աճ 13. Շինարարության ոլորտի զարգացում 14. Վարկային տոկոսադրույքների աճ 15. Դրամավոր մետաղների գների աճ 16. Հայ-թուրքական սահմանի բացում	1. Արժույթների փոխարժեքների անկայունություն/անորոշություն 2. Համաշխարհային ֆինանսական շուկաներում անբարենպաստ զարգացումներ, կտրուկ ցնցումներ, արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավման դժվարություններ 3. Արտարժութային բաց դիրքի խորացում 4. Բարձր վարկային ռիսկ 5. Դոլարիզացիայի մակարդակի բարձրացում 6. Իրացվելիության սղության պայմաններում՝ ներգրավվող միջոցների տոկոսադրույքների բարձրացում 7. Գործընկեր երկրներում առկա տնտեսական և քաղաքական խնդիրներ 8. Տնտեսական անկում 9. Գործազրկության աճ, տրանսֆերտների և բնակչության եկամուտների նվազում 10. Խնայողությունների/դրամական հոսքերի անկում և ավանդների արտահոսք 11. Ստվերային տնտեսության մեծ ծավալներ 12. Մրցակցության սրացում 13. Նավթի/անշարժ գույքի գների նվազում 14. Քաղաքական ռիսկի առկայություն 15. Պետական հատվածի անկատարություն, ֆինանսական միջնորդության ցածր մակարդակ 16. Միջոցների ժամկետային ճեղքվածքի աճ 17. Հեղինակային իրավունքների խախտման հնարավորություն 18. ԿԲ նորմատիվային դաշտի անկանխատեսելի փոփոխություն 19. Գնաճային ճնշումներ/ միջազգային ապրանքահումքային շուկաներում գների աճ 20. Տոկոսադրույքների էական տատանումներ 21. Օրենսդրական անբարենպաստ փոփոխություններ, ՀՀ ԿԲ կոշտ դրամավարկային քաղաքականություն

Ուժեղ կողմեր	1. Կապիտալացման բարձր/ բավարար մակարդակ 2. Որպես բաժնետեր/գործընկեր միջազգային հեղինակավոր ֆինանսական կազմակերպության առկայություն 3. Հաճախորդների հաստատուն բազայի և բանկի նկատմամբ նրանց վստահության առկայություն 4. Առաջնակարգ բանկերում թղթակցային հաշիվների առկայություն 5. Միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցների հետ համագործակցություն, դրանցից ֆինանսավորում ստանալու հնարավորություն 6. Միջազգային վարկանշային ընկերության կողմից շնորհված վարկանիշի առկայությունը 7. Բանկային համակարգում մեծ փորձի առկայությունը 8. Ձևավորված բարի համբավ, բարձր հեղինակություն ֆինանսական համակարգում 9. Որակյալ կադրերի առկայություն 10. Բարձր կորպորատիվ կուլտուրա 11. Ակտիվ վարկային քաղաքականություն և վարկային պորտֆելի բարձր որակ 12. Իրացվելիության բարձր մակարդակ 13. Բյուջեի սպասարկում, պետական ծրագրերում մասնակցություն 14. Ջուտ տոկոսային եկամուտների բարձր մակարդակ 15. Ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացման բարձր մակարդակ 16. Ծառայությունների ընդգրկում փաթեթի տրամադրում 17. Բաժնետերերի օժանդակությունը միջոցների ներգրավման մեջ 18. Առաջատար/ամուր մրցակցային դիրք որևէ ոլորտում 19. Մատուցվող ծառայությունների/սպասարկման բարձր որակ 20. Բազմատեսակ բանկային ծառայությունների արագ աճ 21. Նորույթների պարբերական ներդրում 22. Մի շարք վճարային համակարգերին անդամակցություն 23. Մասնաճյուղերի/բանկոմատների լայն ցանց/արագ ընդլայնում 24. Բանկային ռիսկերի (հատկապես՝ վարկային ռիսկի) կառավարման բարձր մակարդակ, ռիսկերի ապահովագրության առկայություն 25. Որակի կառավարման համակարգի ներդրում 26. Տեխնիկական և տեխնոլոգիական զինվածության, կոմունիկացիաների բարձր մակարդակ 27. Կազմակերպականառավարչական համակարգերի, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության համակարգերի արդյունավետություն 28. Վարչականառավարչական ծախսերի ցածր մակարդակ 29. Ակտիվների երաշխավորվածության բարձր մակարդակ 30. Բավարար նյութատեխնիկական բազա և տարածք 31. Շահութաբերության բավարար մակարդակ 32. Ճկուն սակագնային քաղաքականություն	*1. Հաշվի առնելով բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճն ու ժամանակակից բանկային ծառայությունների տարածման միտումը՝ ծածկել հաճախորդների չբավարարված պահանջարկի մասը՝ օգտագործելով մրցակցային առավելությունները՝ ի թիվս ֆինանսական շուկայում արդեն իսկ ճևավորված բարձր հեղինակության ու բարի համբավի, առաջարկվող ծառայությունների բազմազանության, սպասարկման բարձր որակի և բարձր կորպորատիվ կուլտուրայի:* *2. Տնտեսության խթանման և սոցիալական բարեփոխման պետական քաղաքականության արդյունքում ՀՀ տնտեսության ակտիվացմանն աջակցել՝ որդեգրելով ակտիվ վարկավորման քաղաքականություն, օգտագործելով սեփական կապիտալիզացիայի բարձր մակարդակն ու միջազգային ֆինանսական կառույցներից միջոցներ ներգրավելու հնարավորությունը:*	*1. Օգտագործել ռիսկերի կառավարման գործում մեխանիզմներն ու որակյալ կադրերի առկայությունը՝ դիմակայելու բարձր վարկային ռիսկի, տոկոսադրույքների հնարավոր էական տատանումների, արժույթների փոխարժեքների անկայունության ու այլ ռիսկերի հետևանքով առաջացող հնարավոր վտանգներին:* *2. Օգտագործել հաճախորդների հաստատուն բազայի և բանկի նկատմամբ նրանց վստահության առկայությունը՝ ամրընդհատ սրացող մրցակցությանը պայմաններում առաջարկելով ամրընդհատ նորացվող բանկային ծառայությունների փաթեթ:*

Թույլ կողմեր	1. Միջազգային ֆինանսական շուկաների զարգացումների նկատմամբ զգայունություն (ներգրավվող միջոցների տեսանկյունից) 2. Հիմնական ավանդների համեմատաբար ցածր տեսակարար կշիռը պարտավորությունների կազմում 3. Ջուտ ոչ տոկոսային եկամտի մեծ ճեղքվածք/ծախսերի չափազանց բարձր մակարդակ 4. ՀՀ ֆինանսական շուկայում անբավարար ճանաչվածության մակարդակ 5. Ծառայությունների տեսականիի անբավարար մակարդակ 6. Բանկի ծավալային ցուցանիշների/դրանց աճի տեմպերի ցածր մակարդակ, ծավալային և որակական ցուցանիշների անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին 7. Ֆինանսական շուկայում/ առանձին հատվածներում փոքր մասնաբաժին 8. Երկարաժամկետ ռեսուրսների անբավարար մակարդակ 9. Միջազգային վարկանշային կազմակերպությունների վարկանիշի բացակայություն 10. Դրամային ռեսուրսային բազայի ցածր մակարդակ և որպես արդյունք՝ սպառողական վարկավորման սահմանափակվածություն 11. Ներքին հսկողության համակարգերի անկատարություն 12. Ռիսկերի կառավարման թերի համակարգեր/խնդրահարույց վարկերի հետ աշխատող առանձին ստորաբաժանման բացակայություն 13. Ակտիվների դիվերսիֆիկացիայի ոչ բավարար մակարդակ 14. Ներգրավված միջոցների դիվերսիֆիկացման ցածր մակարդակ 15. Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության և օտարերկրյա ֆինանսական ծրագրերին մասնակցության բացակայություն 16. Հաճախորդների բազայի թերզարգացվածություն/ոչ ռեզիդենտների հետ կապերի անբավարար մակարդակ 17. Մասնաճյուղային ցանցի թերզարգացվածություն/ անկատարություններ 18. Դասակարգված վարկերի առկայություն 19. Կադրային քաղաքականության անկատարություններ/կադրերի որակավորման ցածր մակարդակ 20. Թույլ զգայունությունը ՀՀ ֆինանսական շուկայի նկատմամբ 21. Մեփականատերերի կազմում ինստիտուցիոնալ կառույցի բացակայություն 22. Արտերկրում «հենարան-կառույցի» բացակայություն 23. Կապիտալացման ցածր մակարդակ 24. Ծրագրային ապահովվածության հետ կապված/տեխնոլոգիական թերություններ	*1. Ֆինանսական համակարգի շարունակական զարգացման գործում սեփական մասնակցությունն ունենալու համար բանկի ծավալային և որակական ցուցանիշների աճի անբավարար տեմպերի ճշգրտում և համապատասխանեցում համակարգային միջին արդյունքներին:* *2. Երկարաժամկետ և մատչելի միջոցների բացակայության փաստը շտկելու նպատակով միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության ստեղծում և զարգացում:*	*1. Մրցակցության սրացմանը դիմակայելու և հաճախորդների բազան չկորցնելու համար մասնաճյուղային ցանցի անկատարությունների շտկում և նպատակառողված, գրագետ մարկետինգային քաղաքականության մշակում և իրականացում:* *2. Հաշվի առնելով հնարավոր ռիսկերի բարձր մակարդակը և դրանց կառավարման համակարգի անկատարությունները՝ զգուշավոր վարկավորման քաղաքականության որդեգրում, բարձր ռիսկային գործառնությունների սահմանափակում:*

ՀՀ առևտրային բանկերը առավել «հակված» են տեսնելու/նշելու արտաքին միջավայրից բխող սպառնալիքները, որոնց դիմակայելու որոշ միջացառումներ են իհարկե առաջարկվում են, սակայն դրանք որպես հնարավորություն օգտագործելու տարբերակներ գրեթե ոչ մի բանկ չի քննարկում:

Ընդհանուր կապիտալ


(տե՛ս Հավելված 2)

Բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերով ներկայացված կանխատեսումների համաձայն՝ 31.12.2009-31.12.2012թթ. (այսուհետ 2010-2012թթ) ընթացքում ՀՀ բանկային համակարգի կապիտալը կավելանա 54%-ով կամ 151 մլրդ դրամով (տարեկան միջին աճը՝ 16%):

Կանխատեսված աճի արդյունքում 2012թ. վերջի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը կկազմի 428.7 մլրդ դրամ:

2010-2012թթ. ՀՋԾ-ներով 5 բանկ նախատեսել է կապիտալի համալրում իրականացնել արտաքին աղբյուրների հաշվին:

Բանկային համակարգի կապիտալի կանխատեսվող կառուցվածք
(մլրդ. ՀՀ դրամ)



<u>Ներգրավված միջոցներ</u>

(տե՛ս Հավելված 2)

2010-2012թթ. համար ՀՀ առևտրային բանկերը կանխատեսել են ընդհանուր պարտավորությունների 68%-ով կամ 748.1 մլրդ դրամով աճ (տարեկան միջին աճը 19%)՝ 2012թ. վերջին բանկային համակարգի պարտավորությունների ծավալը հասցնելով 1 տրլն 850.2 մլրդ դրամի:


Կանխատեսումների համաձայն՝ 2010-2012թթ. ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդները կավելանան 80%-ով կամ 505.8 մլրդ դրամով (տարեկան միջինը աճելով 22%-ով) և 2012թ. վերջին կկազմեն 1 տրլն 141.4 մլրդ դրամ: Արդյունքում, ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում կավելանա չորս տոկոսային կետով՝ 2009թ.-ի վերջի 58%-ից 2012թ. հասնելով 62%-ի:

2010-2012թթ. ֆիզիկական անձանց ավանդների աճը կանխատեսվում է, որ կլինի 76% կամ 259.5 մլրդ դրամ (տարեկան միջին աճը՝ 21%)՝ 2012թ. վերջին կազմելով 599.7 մլրդ դրամ:

Իրավաբանական անձանց ավանդները կավելանան 83%-ով կամ 246.2 մլրդ դրամով (տարեկան աճը՝ 22%) և կկազմեն 541.8մլրդ դրամ:

Վերոնշյալի արդյունքում ավանդների կառուցվածքում փոքր-ինչ կավելանա իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշիռը՝ 2009թ.-ի վերջի 46%-ից 2012թ. կազմելով 47%:

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված միջոցների կանխատեսվող կառուցվածքը (մլրդ. ՀՀ դրամ)




Ցպահանջ ավանդների աճի կանխատեսումները եռամյա կտրվածքով կազմում են 81% կամ 207.9 մլրդ դրամ (տարեկան՝ 22%)՝ 2012թ. կազմելով 466.1 մլրդ դրամ:


Ժամկետային ավանդների աճը, փոքր-ինչ զիջելով ցպահանջ ավանդների աճին, կկազմի 79% կամ 297.9 մլրդ դրամ (տարեկան աճը՝ 21%) և 2012թ. վերջին կկազմի 675.4 մլրդ դրամ:


Արդյունքում, ժամկետային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդների մեջ չի փոխվի՝ 59%:

Ցպահանջ և ժամկետային միջոցների կանխատեսվող կառուցվածք (մլրդ. ՀՀ դրամ)



Ինչպես արդեն նշվել է, 2010-2012թթ. ընթացքում ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են ավելացնել ռեզիդենտ այլ (միջազգային) ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցները՝ 158%-ով կամ 127.7 մլրդ դրամով (տարեկան միջինը ավելացնելով 38%-ով)՝ 2012թ. վերջին կազմելով 208.6 մլրդ դրամ: Արդյունքում, սակայն, այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված ավանդների ու վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում 2012թ. վերջին՝ 2009թ.-ի վերջի համեմատ կավելանա չորս տոկոսային կետով և կկազմի 11%:





1. Ժողովրդային հաշիվներ
2. Ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ և հաշիվներ
3. Իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ միջոցներ և հաշիվներ
4. Պարտավորություններ գանձապետարանի նկատմամբ
5. Բանկերից և ՀՀ ԿԲ-ից ներգրավված ավանդներ և վարկեր
6. Այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված ավանդներ և վարկեր
7. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ
8. Իրավաբանական անձանց և հիմնարկների ժամկետային ավանդներ
9. Այլ պարտավորություններ

Տեղաբաշխված միջոցներ

(տե՛ս Հավելված 2 և 4)

Բանկերը 2010-2012թթ. ՀՋԾ-ներով կանխատեսել են ՀՀ բանկային համակարգի ակտիվների 65% կամ 899.0 մլրդ դրամով աճ (տարեկան միջին աճը՝ 18%), որի արդյունքում 2012թ. վերջին բանկային համակարգի ակտիվները կկազմեն 2 տրլն 278.9 մլրդ դրամ: **Պարտավորությունների աճի տեմպերի՝ ակտիվների աճի տեմպերին գերազանցելու արդյունքում ՀՀ բանկային համակարգի լևերիջի (պարտավորություններ/ակտիվներ) ցուցանիշը 2012թ. վերջին 2009թ.-ի վերջի համեմատ կավելանա 1 տոկոսային կետով և կկազմի 81%:**


Բանկային համակարգի ակտիվների վերոնշյալ աճը նախատեսվում է հիմնականում ի հաշիվ վարկերի, պետական արժեթղթերի և ՀՀ ԿԲ-ում և բանկերում թղթակցային հաշիվների աճերի:

Այսպես, 2010-2012թթ. ընթացքում բանկային համակարգի վարկերն ու պետական արժեթղթերը կաճեն համապատասխանաբար՝ 716.4 մլրդ դրամ կամ 102% (տարեկան միջին աճը՝ 26%) և 72.1 մլրդ դրամ կամ 92% (տարեկան միջինը՝ 25%), և կկազմեն՝ 1 տրլն 419.8 մլրդ դրամ և 150.2 մլրդ դրամ:

Վերոնշյալի արդյունքում բանկային համակարգի ակտիվներում կփոփոխվի վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում՝ 2012թ. վերջին 2009թ.-ի վերջի համեմատ ավելանալով 11 տոկոսային կետով և կազմելով 61%: Պետական արժեթղթերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կնվազի 1 տոկոսային կետով՝ 2012թ. վերջին կազմելով 7%:

Համաձայն բանկերի ՀՋԾ-ների՝ ՀՀ ԿԲ-ում և բանկերում թղթակցային հաշիվները 2010-2012թթ. ընթացքում կաճեն 66.6 մլրդ դրամով կամ 24%-ով (տարեկան աճը՝ 8%) և 31.12.2012թ. դրությամբ կկազմեն 346.1 մլրդ դրամ: Այնուամենայնիվ, վերջինիս՝ ակտիվների համեմատ նվազ աճի տեմպերի արդյունքում ԿԲ-ում և բանկերում թղթակցային հաշիվների տեսակարար կշիռն

ընդհանուր ակտիվներում 2009թ.-ի վերջի համեմատ կնվազի հինգ տոկոսային կետով՝ 2012թ. վերջին կազմելով 15%:




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում և բանկերում
3. Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտներ և վարկեր
4. Վարկեր տնտեսությանը
5. Պետական արժեթղթեր
6. Այլ արժեթղթեր
7. Լիզինգ և ֆակտորինգ
8. Հիմնական միջոցներ
9. Այլ ակտիվներ

2010-2012թթ. ՀՁԾ-ներով կանխատեսված ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի տարեկան 27% աճը նախատեսվում է հիմնականում ի հաշիվ արդյունաբերության ոլորտի (միջին տարեկան աճը՝ 59.0 մլրդ դրամ կամ վարկային պորտֆելի ընդհանուր աճի մեջ 25%), առևտրի ոլորտի (55.9 մլրդ դրամի չափով կամ 24%-ը), սպառողական (36.8 մլրդ դրամ կամ 16%), հիփոթեքային (26.6 մլրդ դրամ կամ 11%) և գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի (20.8 մլրդ դրամ կամ 9%) վարկերի աճերի:


Ըստ կանխատեսումների՝ ընդհանուր վարկային պորտֆելի տարեկան աճի տեմպը (27%) կգերազանցեն գյուղատնտեսության (միջին տարեկան աճը՝ 34%), արդյունաբերության (30%), առևտրի (29%) և տրանսպորտի ու կապի (29%) ոլորտների վարկային պորտֆելների աճերը:

Բանկային համակարգի վարկային ներդրումների կանխատեսվող ճյուղային կառուցվածքը (մլրդ. ՀՀ դրամ)




1. Արդյունաբերություն
2. Գյուղատնտեսություն
3. Շինարարություն
4. Տրանսպորտ և կապ
5. Առևտուր
6. Հանրային սնունդ և ապասարկման այլ ոլորտներ
7. Ֆինանսական հատված
8. Սպառողական վարկեր
9. Հիփոթեք վարկեր
10. Տնտեսության այլ ճյուղեր

Բանկային համակարգի վարկային ներդրումների կանխատեսված կառուցվածքը առ 31.12.2009




Բանկային համակարգի վարկային ներդրումների կանխատեսված կառուցվածքը առ 31.12.2012




Բանկերի կանխատեսումների արդյունքում՝ 2012թ. վերջին՝ 2009թ.-ի վերջի համեմատ ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի կառուցվածքը որոշակի փոփոխություններ կկրի, մասնավորապես. վարկային պորտֆելում կպահպանվի արդյունաբերության ճյուղի վարկերի ամենամեծ մասնաբաժինն. վերջինս նշված ժամանակահատվածի ընթացքում կաճի երեք տոկոսային կետով՝ 31.12.2012թ. կազմելով 24%, նույնքան կաճի նաև առևտրի ոլորտին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը՝ 2012թ. վերջին ունենալով 23% կշիռ, հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը կանխատեսվող ժամանակահատվածում չի փոխվի՝ կազմելով 11%, իսկ գյուղատնտեսության ոլորտին տրված վարկերի տեսակարար կշիռը կավելանա 1 տոկոսային կետով և 2012թ. վերջին կկազմի վարկային պորտֆելի 7%:

Արդյունաբերության ճյուղում ևս որոշակի կառուցվածքային փոփոխություններ տեղի կունենան. ճյուղի աճի զգալի մասը (տարեկան միջինը՝ 47%-ը կամ 27.5 մլրդ դրամը) պայմանավորված կլինի սննդի արդյունաբերությանը տրամադրված վարկերի աճով: Արդյունքում, կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում սննդի արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռն արդյունաբերության ընդհանուր վարկերի մեջ կավելանա 9 տոկոսային կետով՝ 2012թ. վերջին կազմելով 42%, իսկ էներգետիկայի ոլորտին տրված վարկերի տեսակարար կշիռը կավելանա 2 տոկոսային կետով՝ 2012թ. վերջին կազմելով 23%: Կնվազի հանքագործության ոլորտի վարկավորման (8 տոկոսային կետով) տեսակարար կշիռն արդյունաբերության ընդհանուր վարկերի մեջ՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջին կազմելով 6%:

Արդյունաբերության ճյուղի վարկերի կառուցվածքը առ 31.12.2009



Արդյունաբերության ճյուղի վարկերի կանխատեսված կառուցվածքը առ 31.12.2012



1. հանքագործություն
2. էներգետիկա
3. սննդի
4. թեթև
5. քիմիական
6. շինանյութերի
7. թանկարժեք իրերի
8. մետալուրգիա
9. մեքենաշինական և էլեկտրատեխնիկական
10. արդյունաբերության այլ ճյուղեր

<u>Բանկերի գործունեության ծրագրավորվող ֆինանսական արդյունքները</u>

(տե՛ս Հավելվածներ 2 և 3)


2010-2012թթ. ՀՋԾ-ներով ՀՀ առևտրային բանկերն իրենց եկամուտների և ծախսերի կառուցվածքում կանխատեսել են հետևյալ զարգացումները. այսպես, համաձայն կանխատեսումների քննարկվող ժամանակահատվածի ընթացքում՝ 2009թ.-ի համեմատ բանկային համակարգի համախառն եկամուտները կավելանան 126.7 մլրդ դրամով կամ 85%-ով (տարեկան աճը՝ 23%) և 2012թ. կկազմեն 275.3 մլրդ դրամ: Բանկային համակարգի համախառն ծախսերը 2012թ.՝ 2009թ.-ի համեմատ կավելանան 72.2 մլրդ դրամով կամ 63%-ով (տարեկան աճը՝ 18%) և կկազմեն 186.7 մլրդ դրամ:

Հատկանշական է, որ կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում համախառն եկամուտների կառուցվածքում 1 տոկոսային կետով կնվազի տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 2012թ. կազմելով 76%: Միաժամանակ, համախառն ծախսերի կառուցվածքում 2 տոկոսային կետով կնվազի ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը՝ 2012թ. կազմելով 52%:

Արդյունքում 2010-2012թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտները կավելանան 58.6 մլրդ դրամով կամ 95%-ով (տարեկան 25%-ով) և 2012թ. կկազմեն 120.4 մլրդ դրամ, ընդ որում, տոկոսային եկամուտների աճի տեմպը (22%) կգերազանցի տոկոսային ծախսերի միջին տարեկան աճի տեմպը (19%):


Քննարկվող ժամանակահատվածի ընթացքում զուտ ոչ տոկոսային եկամուտների կառուցվածքում ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի բացասական ճեղքվածքը ավելի կմեղմանա՝ ոչ տոկոսային եկամուտների աճի տեմպի (25%) ոչ տոկոսային ծախսերի միջին տարեկան աճի տեմպին (16%) գերազանցելու պայմաններում. զուտ ոչ տոկոսային եկամուտները 2010-2012թթ. ընթացքում կնվազեն 4.0 մլրդ դրամով կամ 14%-ով (տարեկան՝ 5%-ով) և 2012թ. կկազմեն -31.8 մլրդ դրամ:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի աճի կանխատեսվող դինամիկա (մլրդ. ՀՀ դրամ)



Համաձայն ՀՀ առևտրային բանկերի կանխատեսումների՝ բանկերի կողմից ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված զուտ մասհանումները կնվազեն 2.1 մլրդ դրամով կամ 16%-ով, և 2012թ. կկազմեն 11.1 մլրդ դրամ, ընդ որում, զուտ մասհանումների վերոնշյալ նվազումը կանխատեսվում է ի հաշիվ 2010թ. զուտ մասհանումների 39% նվազման:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կանխատեսվող կառուցվածք (մլրդ. ՀՀ դրամ)



Ըստ ՀՀ առևտրային բանկերի 2010-2012թթ. ՀԶԾ-ների՝ կանխատեսվող ժամանակաշրջանում բանկային համակարգի զուտ մասհանումներ/ համախառն ակտիվներ ցուցանիշը կտատանվի 0.6%-0.7% միջակայքում (2009թ.՝ 1.3%):

2010-2012թթ. բանկային համակարգի զուտ շահույթը կաճի 52.7 մլրդ դրամով կամ 7.3 անգամ (տարեկան աճելով 121%-ով) և 2012թ. կկազմի 61.1 մլրդ դրամ:

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան[2] կտատանվի 4.8%-5.3% (2009թ.՝ 4.5%):

Բանկերի ակտիվների շահութաբերությունը բնութագրող զուտ շահույթ/համախառն ակտիվներ ցուցանիշը (ROA), ըստ կանխատեսումների, 2010-2012թթ. կտատանվի 2.0%-2.7% (2009թ. 0.4%), իսկ կապիտալի շահութաբերությունը բնութագրող զուտ շահույթ/ կապիտալ (ROE) ցուցանիշը՝ 9.8%-13.4% միջակայքում (2009թ.՝ 2.1%):

Կանխատեսվող երեք տարիների միջին արդյունքներով՝ ըստ ROA-ի մեծության բանկերը կարելի է բաժանել մի քանի խմբի՝

3.5% - ից բարձր ROA ունեցող բանկեր՝ 2 բանկ,
2.5% - 3.5% ROA ունեցող բանկեր՝ 7 բանկ,
1.5% - 2.5% ROA ունեցող բանկեր՝ 10 բանկ,
1.5%- ից ցածր ROA ունեցող բանկեր՝ 3 բանկ:

Ըստ ROE-ի մեծության՝

15% - ից բարձր ROE ունեցող բանկեր՝ 5 բանկ,
11% - 15% ROE ունեցող բանկեր՝ 7 բանկ,
8% - 11% ROE ունեցող բանկեր՝ 6 բանկ,
8% - ից ցածր ROE ունեցող բանկեր՝ 4 բանկ:

[2] *զուտ տոկոսային եկամուտ/ակտիվներ*

Բանկերի կառավարման համակարգ

Ըստ 2010-2012թթ.-ի ՀՋԾ-ների՝ ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են կառավարման համակարգերի կատարելագործման հետևյալ միջոցառումները.

- նոր հանձնաժողովների/կառուցվածքային միավորների ստեղծում.
- որակի կառավարման համակարգի ներդրում/կատարելագործում.
- նոր կազմակերպակառավարչական (այդ թվում՝ տարածքային կառավարման) համակարգի ձևավորում/նախկինի բարելավում.
- կորպորատիվ կառավարման համակարգի և կորպորատիվ կուլտուրայի բարելավում.
- հանձնաժողովների աշխատանքների իրականացում՝ ուղղված ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը
- ներքին հսկողության համակարգերի կատարելագործում.
- տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համակարգերի կատարելագործում, ներքին տեղեկատվական հոսքերի արդյունավետության բարձրացում.
- տեղեկատվության թափանցիկության բարձրացում
- կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների ձևափոխում.
- ռիսկերի կառավարման նոր համակարգերի ներդրում/նախկինի կատարելագործում
- հաստատված ընթացակարգերի վերանայում
- աշխատակազմի կատարողականի գնահատման համակարգի ներդրում/կատարելագործում:
- Պլանավորման գործընթացների և կատարողականների վերլուծության գործընթացների հետագա կատարելագործում

2010-2012թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով՝ ՀՀ առևտրային բանկերը կարևորել են ստորև բերված աղյուսակում ներկայացված ռիսկերը.

Ռիսկ	*Կառավարման մեթոդ*
Վարկային ռիսկ	• վարկավորման գործընթացի կանոնակարգման կատարելագործում և ստանդարտացում • կենտրոնացված վարկերի տվյալների բազայի կատարելագործում/վարկային ռեգիստրի ստացվող տվյալների կիրառում • սքորինգային համակարգերի կիրառում, տնտեսության ճյուղերի/ առանձին ոլորտների վերլուծությունների իրականացում՝ վարկավորման համար առավել նպատակահարմար ճյուղերը բացահայտելու և վարկային ռիսկը ցածր պահելու նպատակով • վարկային ռիսկի կառավարմանը հատկացվող մարդկային ռեսուրսների ավելացում • վարկային պորտֆելի մոնիթորինգի իրականացում, հաճախորդների մանրակրկիտ ուսումնասիրություն • վարկավորման/ներդրման սահմանաչափերի կիրառում, վարկային ռիսկի մակարդակի ուղենիշների սահմանում, զգուշավոր վարկային քաղաքականության իրականացում • լրացուցիչ երաշխավորությունների ստացում • վարկային ռեսուրսների դիվերսիֆիկացիա • գրավի գնահատման իրատեսական մեթոդներ, օր՝ գրավների

	վերագնահատում շուկայական արժեքով, դրանց մանրակրկիտ ուսումնասիրություն, վարկային պայմանագրերում լրացուցիչ ապահովվածության նախատեսում, եթե առկա գրավի շուկայական արժեքն իջնի • փոխադարձ պահանջների վերջնահաշվարկ • ապահովագրում • սթրես-սցենարների կիրառում • ֆինանսական խմբի մեջ մտնող բանկերի կողմից օգտագործվող՝ վարկային ռիսկի կառավարման համակարգի կիրառում • կարճաժամկետ վարկերի տեսակարար կշռի մեծացումը • վարկային պայմանագրի պայմանների կատարման նկատմամբ մոնիտորինգի, վարկառուի ֆինանսական վիճակի և նրա կողմից վարկը մարելու հնարավորության նկատմամբ, վարկառուների կողմից վարկի նպատակային օգտագործման նկատմամբ անընդհատ հսկողություն
Իրացվելիության ռիսկ	• բարձր իրացվելի ակտիվների անհրաժեշտ մակարդակի ապահովում • դրամական հոսքերի կանխատեսում, միջոցների տեղաբաշխման և ներգրավման պլանավորում՝ ելնելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակի հաշվարկից • իրացվելիության ռիսկի կառավարումը կարգավորող ներքին նորմատիվ ակտերի կիրառում/կատարելագործում • ներգրավված միջոցների դիվերսիֆիկացիա • անհրաժեշտության դեպքում իրացվելիության հայթայթման այլընտրանքային եղանակների նախատեսում • համապատասխան ծրագրային ապահովման կիրառում՝ իրացվելության գնահատման և հաշվետվությունների պատրաստման համար • սթրես-սցենարների կիրառում • GAP, CAMELS և դյուրացիա մեթոդների կիրառում • իրացվելիության ռիսկի չեմի ընտրություն՝ համաձայն ներքին կարգավորիչ պայմանների • ճեղքվածքի կառավարում, հստակ սահմանների կիրառում և դրանց մոնիտորինգ • ընթացիկ իրացվելիության ամենօրյա վերահսկողություն և ժամկետային իրացվելիության պլանավորում
Արտարժութային ռիսկ	• փակ արտարժութային դիրքի պահպանում (բաց դիրքի սահմանափակում) • ռիսկի գնահատում ստանդարտ, VAR և GAP մեթոդներով • արտարժութային ռիսկի հեջավորում • նորմատիվ իրավական ակտերի ներդրում և սթրես-սցենարների կիրառում • արտարժույթի ռիսկի ամենօրյա մոնիթորինգ
Տոկոսադրույքի ռիսկ	• սփրեդի, մարժայի և ճեղքվածքի վերլուծություն, դյուրացիա, GAP, ստանդարտ և տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների ու պարտավորությունների կառավարման այլ մեթոդների կիրառում • սթրես-սցենարների կիրառում • համապատասխան ծրագրային ապահովման կիրառում/մոդելի առկայություն՝ տոկոսադրույքի ռիսկի գնահատման և համապատասխան

	հաշվետվությունների պատրաստման համար
Գործառնական ռիսկ	• ներքին կանոնակարգման կատարելագործում • գործառնական ռիսկի կառավարման համար անհրաժեշտ տվյալների միասնական բազայի ձևավորում և դրա հիման վրա ռիսկի հաշվարկման մաթեմատիկական մոդելների մշակում • գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի անցումը On-line ռեժիմի • ակտիվային գործառնություններ իրականացնող աշխատակիցների անձնական պատասխանատվության ուժեղացում, գործունեության հսկողություն: • տեխնիկա-ծրագրային ապահովման միջոցների ներդրում, անվտանգության համակարգերի կատարելագործում, ներքին կանոնակարգերի կիրառում և նոր սահմանափակող միջոցառումների իրականացում • աշխատակիցների ընդունման, դրանց գործառնությունների թափանցիկության և պրոֆեսիոնալիզմի ապահովման միջոցառումների իրականացում • արտակարգ իրավիճակներից ապաքինման ծրագրերի մշակում, ներքին աուդիտի գործառույթի հզորացում
Խոշոր հաճախորդներից կախվածության ռիսկ	• Միջոցների բազմազանեցում
Գնային ռիսկ	• «Ներդրումային քաղաքականությամբ» որոշակի սահմանափակումների սահմանում, ինչպես նաև ռիսկերի բացահայտման, վերահսկման և չափման ուղղությամբ ամենամսյա վերլուծությունների իրականացում:
Իրավական ռիսկ	• օրենքների, ՀՀ ԿԲ կանոնակարգերի և պայմագրային դրույթների խախտման դեպքերի բացառման համար ռիսկի մոնիթորինգի իրականացում • համապատասխանության գործառույթը իրականացնող կոմիտեի առկայություն
Երկրի ռիսկ	• ըստ երկրների՝ գործունեության սահմանաչափերի կիրառում

Ռիսկերի գնահատման և կառավարման ոլորտում բանկերն առավել հաճախ սկսել են «դիմել» միջազգային լավագույն փորձին՝ ձգտելով արդեն ընդունված մեթոդները լրացնել ռիսկերի կառավարման առավել արդյունավետ մեթոդներով:

ՀՀ առևտրային բանկերում արդեն առկա են ցուցանիշների որոշակի վիճակագրական շարքեր, որոնք հնարավորություն են տալիս բանկերին վերլուծել նախկինում ի հայտ եկած միտումները, ռիսկերը և դրանք կիրառել ցուցանիշների կանխատեսման և ռիսկերի գնահատման համար:

Այսպիսով, բանկերի կողմից կառավարման համակարգերի արդյունավետության նախատեսվող բարձրացման արդյունքում 2012թ. բանկերի կառավարման տնտեսական արդյունավետությունը (տե՛ս Հավելված 5) բնութագրող զուտ շահույթ/համախառն ծախսեր ցուցանիշը կհասնի 33%-ի (2009թ.՝ 7.3%), իսկ կառավարման արդյունավետությունը բնութագրող մեկ այլ ցուցանիշ, այն է՝ մեկ աշխատակցին բաժին ընկնող զուտ շահույթի մեծությունը կանխատեսվող ժամանակահատվածում աստիճանաբար կաճի՝ 2012թ-ի վերջին հասնելով 6.0 մլն դրամի (2009թ.՝ 1.0 մլն դրամ):

Կադրային քաղաքականություն

ՀՀ առևտրային բանկերը տարեցտարի ավելի մեծ կարևորություն են տալիս մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործմանը՝ կադրային քաղաքականության շեշտը դնելով կադրերի որակավորման բարձրացման վրա: 2010-2012թթ. ՀՋԾ-ներով՝ նախատեսվել են կադրային քաղաքականության բարելավմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- կադրերի (հատկապես ռիսկերի կառավարման մասնագետների) որակավորման բարձրացում՝ նրանց ուսուցման, վերապատրաստման, ուսուցողական դասընթացների կազմակերպման, գործընկերների հետ փորձի փոխանակման և ՀՀ-ում ու արտերկրում կազմակերպված սեմինարներին մասնակցության միջոցով
- Նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների ներդրում՝ աշխատանքի նկատմամբ ստեղծագործ մոտեցումը խթանելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով
- աշխատակիցների արդյունավետության գնահատման չափանիշների համակարգի ներդնում/ կատարելագործում
- աշխատակիցների քանակի և աշխատավարձի ֆոնդի ավելացում
- մասնագետների համալրման և հաջորդականության ապահովման մեթոդների կատարելագործում, ընտրության մրցութային եղանակի կիրառում, թեստերի, հարցազրույցների անցկացում
- մարդկային ռեսուրսների ճիշտ տեղաբաշխում և կադրերի հոսունության նվազեցում
- կադրերի մասնագիտական համապատասխանելիության ստուգում ատեստավորման և աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմի միջոցով
- աշխատանքային պայմանների բարելավում՝ որակյալ կադրերի ներգրավման նպատակով
- կորպորատիվ մտածելակերպի ձևավորման նպատակով միջոցառումների կազմակերպում
- անձնակազմի կառավարման ամենամյա ամփոփ ծրագրի մշակում, որն իր մեջ կներառի ընթացիկ տարվա ամփոփ վերլուծությունը և դրա հիման վրա կազմված հաջորդ տարվա միջոցառումների ծրագիրը
- կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի մշակում, ինչպես նաև աշխատակիցների պաշտոնական պարտականությունների և որակավորմանը ներկայացվող պահանջների ամրագրում
- լավագույն աշխատակիցների բացահայտման մրցույթների կազմակերպում
- աշխատակիցների համար սոցիալական փաթեթի մշակում, աշխատակիցների առողջության ապահովագրության իրականացումը

2010-2012թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի աշխատակիցների թվաքանակը պլանավորվում է, որ կավելանա 25%-ով կամ 680 աշխատողով (տարեկան՝ 8%-ով)՝ 2012թ. վերջին կազմելով 10,238 աշխատակից: Ընդ որում, վարչական աշխատողների թվաքանակը կավելանա 26%-ով (տարեկան՝ 8%) կամ 1,767 աշխատակցով՝ 2012թ. վերջին կազմելով 8,686 աշխատակից *(տե՛ս Հավելված 3)*:

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում անձնակազմի կառուցվածքի արդյունավետությունը բնութագրող՝ «բանկային համակարգի վարչական աշխատողների թիվ/սպասարկող աշխատակիցների թիվ» հարաբերակցության ցուցանիշը կավելանա 0.2–ով՝ 2012թ. վերջին կազմելով 5.6:

Կադրերի վերապատրաստման կարևորության գիտակցման ներքո կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում բանկերի կադրերի ուսուցման և վերապատրաստման քաղաքականությունը բնութագրող մեկ վարչական աշխատողի վրա կատարված ուսուցման ծախսերի ցուցանիշը կաճի 29.7 հազ դրամով կամ 58%-ով (տարեկան միջինը 18%-ով) և 2012թ. կկազմի 80.6 հազ դրամ:

Բանկային համակարգի մեկ վարչական աշխատողին ընկնող միջին աշխատավարձն ու այլ վճարումները 2010-2012թթ. ընթացքում նախատեսվում է, որ կավելանան 7.2 անգամ կամ 16.4 մլն դրամով՝ 2012թ. վերջին կազմելով 19.1 մլն դրամ:

Մարքեթինգային քաղաքականություն

Նոր հաճախորդների ներգրավման և հեղինակության բարձրացման գործընթացում կարևորելով մարքեթինգային միջոցառումների դերը՝ ՀՀ առևտրային բանկերը 2010-2012թթ. համար նախատեսել են իրականացնել հետևյալ միջոցառումները.

- գովազդային արշավներ (ՋԼՄ-ներով, Ինտերնետային, տպագրված նյութերի տարածմամբ, արտաքին գովազդ (գովազդային վահանակներով))
- շուկայական հետազոտությունների, հարցումների իրականացում
- ռե-բրենդինգի իրականացում և բանկի ամբողջական իմիջային և բրենդային տեսքի թարմացում
- բանկային նոր տեխնոլոգիաների ներդրում
- CRM (հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարում) համակարգի կիրառում
- զեղչային համակարգերի, ճկուն սակագնային քաղաքականության կիրառում, ակցիաների իրականացում
- հասարակայնության հետ կապերի կիրառում (PR), գործընկերների հետ փոխհարաբերությունների թափանցիկության ապահովում
- նոր բանկային ապրանքների և ծառայությունների մշակում/գործող տեսականու կատարելագործում
- մատուցվող ծառայությունների սպասարկման որակի և մրցունակության բարձրացում
- բանկի ճանաչելիությանն/վարկանիշի բարձրացմանն և առանձին ծառայությունների առաջխաղացմանն ուղղված միջոցառումների իրականացում
- բանկային նոր տեխնոլոգիաների ներդրում
- ինտերնետային կայքի թարմացում/նորի գործարկում
- գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի շենքերի արտաքին տեսքի բարելավում

Նախատեսվող գովազդային միջոցառումները հիմնականում ունենալու են հետևյալ ուղղությունները.

- ավանդների/ռեսուրսների ներգրավման քաղաքականություն
- տեղեկատվական գովազդ
- բանկի հեղինակության, իմիջի գովազդ
- վճարային քարտեր
- հաճախորդների բազայի ձևավորում/ընդլայնում
- առանձին ծառայությունների առաջխաղացում

Բանկերի կողմից իրականացվելիք շուկայական հետազոտությունները ուղղված են լինելու.

- մրցակիցների վարքագծի, սակագների, քաղաքականության բացահայտում
- բանկային ծառայությունների շուկայում բանկերի մասնաբաժինների բացահայտում
- շուկայում մրցակցային առավելությունների և մրցակիցների համեմատ թերությունների բացահայտում
- բանկային ծառայությունների շուկայի ուսումնասիրություններ
- պոտենցիալ հաճախորդների բացահայտում
- սպառման նոր շուկաների բացահայտում
- հաճախորդների կարիքների, նախասիրությունների, դժգոհությունների և առաջարկությունների ուսումնասիրություն
- ՀՀ օրենսդրական դաշտի ուսումնասիրություն

Չնայած բանկերի կողմից մարքեթինգային միջոցառումներին հատկացվող մեծ նշանակությանը՝ այնուամենայնիվ, բանկային համակարգի գովազդային ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, շատ քիչ կավելանա. բանկային համակարգի վաճառքի խթանման՝ գովազդի ծախսեր/ընդհանուր ծախսեր ցուցանիշը 2012թ.՝ 2009թ.-ի նկատմամբ կանխատեսվում է, որ կավելանա 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 2.5% (Հավելված 5):

<u>Բանկերի «աշխարհագրությունը»</u>

Ըստ կանխատեսումների՝ ՀՀ առևտրային բանկերը 2010թ. կհիմնեն առնվազն 24 մասնաճյուղ, իսկ 2012թ.՝ 2009թ.-ի վերջի համեմատ նախատեսվում է մասնաճյուղերի քանակի աճ առնվազն 69-ով:

V ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2010-2012թթ. համար ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են կիրառել հետևյալ նոր ծառայություններն ու տեխնոլոգիաները.

տեխնիկական և ծրագրային ապահովվածություն

- նոր համակարգչային ծրագրերի ներդրում/գործողների կատարելագործում
- սերվերային համակարգի զարգացում
- «Գործառնական օր» համակարգում աշխատանքի online տարբերակին անցում
- նոր կորպորատիվ ցանցի ստեղծում/առկա ցանցի կատարելագործում
- հաշվետվությունների ձևավորման համակարգի ներդրում
- հեռահաղորդակցման համակարգի զարգացում
- տվյալների արխիվացման համակարգի կատարելագործում
- տեղեկատվական համակարգի միջազգային սերտիֆիկացում/ համապատասխանեցում միջազգային ստանդարտներին
- տեղեկատվական տեխնոլոգիական ծառայությունների կառավարման (ITSL) համակարգի ներդրում

միջոցների ներգրավման գործառնություններ

- նոր ավանդատեսակների ներդրում
- օվերդրաֆտների իրականացում
- ոսկու ստանդարտացված ձուլակտորներով գործառնությունների իրականացում, առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման ծառայությունների ներդնում
- անհատական պահատեղերի տրամադրում

միջոցների տեղաբաշխման գործառնություններ

- վարկերի նոր տարատեսակների ներդրում
- ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացում
- ֆակտորինգ

վճարահաշվարկային գործառնություններ

- Internet-Banking, E-Card Banking
- Mobile-Banking
- SMS-Banking
- WEB Extension համակարգ
- անդամակցում դրամական փոխանցումների համակարգերի
- վճարային քարտերով իրականացվող նոր գործառնությունների ներդրում
- նոր տեսակի վճարային քարտերի թողարկում/սպասարկում
- միջազգային վճարային համակարգի “անկոնտակտ” քարտերի թողարկում
- չիպային քարտերի սպասարկում
- սեփական բազմաֆունկցիոնալ պրոցեսինգային կենտրոնի ստեղծում
- IP-Phone տեխնոլոգիայի ներդրում
- Call կենտրոնի ստեղծում
- բանկ-հաճախորդ համակարգերի ներդրում
- CRM (Customer Relationship Management) համակարգի ստեղծում
- On-line ռեժիմով և ավտոմատ գանձման մեքենաներով բաժանորդավճարների

ընդունում

- քարտերի սպասարկման միջոցների ցանցի ընդլայնում
- անդամակցություն միջազգային վճարային համակարգի
- չեկերի, ակրեդիտիվների և միջազգային վճարամիջոցների այլ ձևերի սպասարկում
- Արտարժույթի Ավտոմատ Փոխանակման Սարքերի (ԱԱՓՍ) տեղադրում
- Կանխիկի մուտքագրման ավտոմատ մեքենաների տեղադրում
- “Cash-in” (կանխիկ ընդունող) բանկոմատների տեղադրում

VI ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

2009թ-ին, ինչպես և նախորդ տարի շատ երկրների կենտրոնական բանկեր շարունակեցին վարել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն: ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող տոկոսադրույքների իջեցման քաղաքականությունը ևս իր ազդեցությունն է ունեցել բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների իջեցման վրա:

Մրցակցությունը բանկային համակարգում 2009թ. էլ ավելի ուժեղացավ, քանի որ համաշխարհային իրացվելիության ճգնաժամի պայմաններում բանկերը սուր մրցակցային պայքարի մեջ մտան՝ հատկապես ռեսուրսների ձեռքբերման գործընթացում:

Մրցակցության վերոնշյալ խորացումը 2009թ. հանգեցրեց հայաստանյան ֆինանսական համակարգում ավանդների տոկոսադրույքների բարձրացման:

Արդյունքում ավանդային տոկոսադրույքների բարձրացումը՝ մի կողմից, և վարկավորման տոկոսադրույքների նվազումը՝ մյուս կողմից, կրճատեցին բանկերի տոկոսային մարժան, ինչի հետևանքով որոշ բանկեր այլ բանկերի կողմից վարվող ագրեսիվ վարկային քաղաքականության արդյունքում զիջեցին իրենց դիրքերը վարկավորման որոշ ոլորտներում:

Բանկային ծառայությունների բազմազանության կարևորման ներկայիս պայմաններում առավել քան արժևորվում է բանկերի կողմից իրականացվող գնային քաղաքականությունը: Կանխատեսվում է, որ տեսանելի ապագայում կշարունակվի բանկերի կողմից «ստանդարտ» ծառայությունների դիմաց գանձվող սակագների հետագա իջեցումը, որը սակայն ծառայությունների քանակական աճի հետևանքով կարող է ապահովել բանկերի ոչ տոկոսային եկամուտների ծավալի բացարձակ աճ: Միաժամանակ, հաշվի առնելով «ոչ ստանդարտ» բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի հետագա աճի ավելի քան բավարար հիմքերը, կարելի է ակնկալել դրանց վաճառքի գների համեմատաբար բարձր մակարդակ, առանց մոտ ապագայում դրանց էական անկման:

Ամփոփելով կարելի է միանշանակ արձանագրել, որ հետագա զարգացումների համար ենթադրաբար բնորոշ կլինի բոլոր կիրառվող գործիքների եկամտաբերության հետագա անկում, ինչը կստիպի սուր մրցակցային դաշտում գործող բանկերին վերաարժևորել ռիսկերի ճիշտ գնահատմանն ու հնարավոր կորուստների կանխարգելմանն ուղղված միջոցառումների ծավալներն ու նշանակությունը, ինչպես նաև տրամադրված բանկային ծառայությունների ու հաճախորդների սպասարկման որակը՝ ֆինանսատնտեսական ցուցանիշների կայունություն ապահովելու, մրցակցային դաշտում իրենց դիրքերն ամրապնդելու և արտաքին ներդրողների համար գրավիչ լինելու համար:

<u>Կոնցենտրացումը պլանավորվող ժամանակահատվածում</u>

(տե՛ս հավելված 7)

ՀՀ բանկային համակարգի կոնցենտրացման փաստացի և բանկերի կանխատեսումների հիման վրա հաշվարկված ցուցանիշները՝ ըստ ակտիվների, վարկային ներդրումների, պետական արժեթղթերի, ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների ներկայացված են Հավելված 7-ում:

Բանկերի 2010-2012թթ. կանխատեսումների համաձայն՝ ՀՀ բանկային համակարգում կոնցենտրացիան գրեթե բոլոր ցուցանիշների գծով կնվազի:

Այսպես, ընդհանուր ակտիվների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կնվազի 0.01 կետով՝ 2012թ. վերջին կազմելով 0.06: Ընդհանուր ակտիվների կոնցենտրացիայի ցուցանիշները՝ ըստ առաջին չորս, յոթ և տասը խոշոր բանկերի, 2010-2012թթ. կնվազեն համապատասխանաբար 2, 5 և 3 տոկոսային կետով և կկազմեն 36%, 58% և 73%:

Վարկային ներդրումների կոնցենտրացման մակարդակը փոփոխություն չի կրի և Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2012թ. վերջին կկազմի 0.07: Վարկային պորտֆելի մեծությամբ առաջին չորս բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշը փոփոխություն չի կրի և կկազմի 40%, իսկ առաջին յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները կնվազեն 3-ական տոկոսային կետով և կկազմեն 60% և 74%:

Պետական արժեթղթերի պորտֆելի գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը ևս փոփոխություն չի կրի և 2012թ. կկազմի 0.07: Պետական արժեթղթերի մեծությամբ առաջին չորս, յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները կաճեն համապատասխանաբար 1, 2 և 1 տոկոսային կետերով և կկազմեն 40%, 60% և 74%:

Ֆիզիկական անձանց ավանդների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2012թ. վերջին՝ 2009թ.-ի վերջի համեմատ կնվազի 0.02-ով և կկազմի 0.08: 2010-2012թթ. ընթացքում ֆիզիկական անձանց ավանդների գծով կոնցենտրացիայի ցուցանիշները՝ ըստ առաջին չորս, յոթ և տասը բանկերի կնվազեն համապատասխանաբար 6, 4, 3 տոկոսային կետով և կկազմեն 47%, 67% և 80%:

Իրավաբանական անձանց ավանդների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2012թ. վերջին՝ 2009թ.-ի վերջի համեմատ կնվազի 0.01-ով և կկազմի 0.07: Իրավաբանական անձանց ավանդների գծով առաջին չորս, յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները կնվազեն համապատասխանաբար 8, 9, 6 տոկոսային կետով և կկազմեն 40%, 61% և 76%:

Ժամկետային ավանդների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2012թ. վերջին՝ 2009թ.-ի վերջի համեմատ կնվազի 0.01-ով և կկազմի 0.08: Ժամկետային ավանդների գծով առաջին չորս, յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները կնվազեն՝ համապատասխանաբար 7, 5 և 5 տոկոսային կետով և կկազմեն 44%, 65% և 79%:

Ընդհանուր կապիտալի համար հաշվարկված Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կանխատեսվող ժամանակաշրջանում չի փոխվի՝ կազմելով 0.06, առաջին չորս բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշը կնվազի 1 տոկոսային կետով՝ 2012թ-ի վերջին կազմելով 37%, իսկ առաջին յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները՝ կաճեն մեկական տոկոսային կետով և 2012թ-ի վերջին կկազմեն համապատասխանաբար 56% և 70%:

VII ԱՄՓՈՓՈՒՄ

2010-2012թթ. բանկային համակարգում նախատեսվում են հետևյալ զարգացումները.

- վարկերի միջին տարեկան աճը 2010-2012թթ. կկազմի 26%.
- ակտիվների միջին տարեկան աճը կկազմի 18% աճ.
- արդյունքում, ՀՀ բանկային միջնորդությունը կաճի. 2012թ. ակտիվներ/ՀՆԱ ցուցանիշը կկազմի մոտ 65%՝ 2009թ.-ի 44%-ի համեմատ, իսկ վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի մոտ 41%՝ 2009թ.-ի 23%-ի համեմատ.
- վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կավելանա՝ 2012թ. կազմելով 62% (2009թ.՝ 51%).
- նախատեսվում է ավանդների միջին տարեկան 22% աճ.
- ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում կավելանա՝ 2012թ. կազմելով 62% (2009թ.՝ 58%).
    - ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդներում փոքր-ինչ կփոքրանա՝ կազմելով 53% (2009թ.՝ 54%).
    - ժամկետային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդներում 2012թ. 2009թ.-ի համեմատ չի փոխվի՝ մնալով 59%.
- բանկերը նախատեսում են կապիտալի համալրում հիմնականում շահույթի հաշվին.
- բանկային համակարգի լևերիջի՝ պարտավորություններ/ակտիվներ ցուցանիշը՝ կավելանա 1.0 տոկոսային կետով՝ 2012թ. կազմելով 81%.
- բանկային համակարգի շահութաբերության մակարդակը կանխատեսվող ժամանակահատվածում կաճի՝ ակտիվների շահութաբերությունը (ROA) 2012թ. կկազմի 2.7% (2009թ. 0.6%), իսկ կապիտալի շահութաբերությունը (ROE)՝ 2012թ. 14.3% (2009թ.՝ 3.0%).
- բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան կաճի՝ 2012թ. կազմելով 5.3% (2009թ.՝ 4.5%).
- 2010-2012թթ. բանկերը նախատեսում են հիմնել առնվազն 69 նոր մասնաճյուղ:

Տեղեկանք 2010-2012թթ.
Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի հեռանկարային զարգացման ծրագրում ընդգրկված «Բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ պայմանավորված կանխատեսվող ցուցանիշների» վերաբերյալ (հավելված 6)

Սույն տեղեկանքը ամփոփում է ՀՀ տարածքում գործող 22 առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրերում ընդգրկված վճարահաշվարկային բնագավառի վերաբերյալ վերջիններիս ռազմավարությունը և կանխատեսումները: Համեմատվում են նաև նախորդ տարիների ընթացքում արձանագրված փաստացի միտումները և առևտրային բանկերի ծրագրված ցուցանիշները, որոնք ծրագրվել և ներկայացվել էին նախորդ տարվա ընթացքում: Առևտրային բանկերի կողմից ռազմավարական ծրագրին կից վճարահաշվարկային բնագավառի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է լրամշակված նոր տեսքով, որը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել այս բնագավառում բանկերի ռազմավարության վերաբերյալ:
Առևտրային բանկերի ռազմավարական ծրագրում՝ վճարահաշվարկային բնագավառի հետ կապված, շոշափվում են ներքոհիշյալ խնդիրները՝

- Բանկի գլխամասի (մասնաճյուղերի) քանակը,
- Հաճախորդների և վերջիններիս հաշիվների քանակը,
- Քարտային բնագավառի զարգացումը առևտրային բանկերի կողմից,
- Նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը,
- Միջազգային դրամական փոխանցումներ:

Սույն տեղեկանքում բանկերի դասակարգումը տարբեր խմբերի իրականացվել է յուրաքանչյուր ծառայության ոլորտում ըստ կանխատեսումների՝ առավելագույն մակարդակից դեպի նվազագույնի:

Բանկի գլխամասի (մասնաճյուղերի) քանակը

2009թ. տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի ընդհանուր քանակը կազմել է 391 այդ թվում 215-ը գտնվում է ք. Երևանից դուրս: Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ բացվել են 30 նոր մասնաճյուղեր և փակվել 25-ը: Մասնաճյուղերը փակվել են հիմնականում երկու առևտրային բանկերի կողմից: 2009թ. տարեսկզբին առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրի համաձայն՝ նախատեսվում էր 2009թ. մոտ 33 մասնաճյուղերի բացում, որի արդյունքում գործող մասնաճյուղերի քանակը պետք է կազմեր 419: Սակայն մասնաճյուղերի փակման արդյունքում դիտարկվել է որոշակի բացասական շեղում (մոտ 27-ով) ծրագրված մասնաճյուղերի քանակի ավելացման հետ կապված:

2010թ. ներկայացված առևտրային բանկերի ռազմավարական ծրագրի համաձայն պետք է բացվեն 36 նոր մասնաճյուղեր և փակվեն 7-ը: Ընդհանուր առմամբ բանկերի կողմից նախատեսվում է մասնաճյուղերի քանակի ավելացում 29-ով (որից 2-ը ք. Երևանում, 27-ը ՀՀ մյուս մարզերում): Մասնաճյուղերի քանակի գերակշիռ մասը 72%-ը (21-մասնաճյուղ, որից 5-ը ք. Երևանում, 16-ը ՀՀ մյուս մարզերում) պետք է ավելացվեն երեք առևտրային բանկերի կողմից: Ընթացիկ ժամանակահատվածում միայն մեկ բանկ է նախատեսում մինչև 7 մասնաճյուղերի կրճատում: Ընդհանուր առմամբ 2010թ տարեվերջին մասնաճյուղերի քանակը պետք է կազմի 442, այդ թվում 242-ը ք. Երևանից դուրս: Այս միտումը շարունակվում է ծրագրվող հետագա տարիների համար և յուրաքանչյուր տարի մասնաճյուղերի քանակը ընդհանուր առմամբ պետք է ավելանա մոտ 50-ով (Գծապատկեր 1):

Հաճախորդների և վերջիններիս հաշիվների քանակը

2009թ. ընթացքում դիտարկվել է հաճախորդների քանակի փաստացի աճ 11.9%-ով (120681 հաճախորդով, այդ թվում՝ ֆիզիկական անձինք կազմում են 112443, իսկ իրավաբանական անձինք՝ 8238) և տարեվերջին հաճախորդների քանակը կազմել է 1135733: Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակի 74%-ը (835407) սպասարկվում են վեց առևտրային բանկերում: 2009թ. տարեսկզբին առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրի համաձայն բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը մինչև տարեվերջ պետք է ավելանար 18%-ով (181738 հաճախորդով, այդ թվում ֆիզիկական անձինք՝ 168685, իսկ իրավաբանական անձինք՝ 13053) և կազմեր մոտ 1196790: Սակայն առևտրային բանկերի կողմից հաճախորդների քանակի ավելացումը կազմել է 2009թ.-ի համար ծրագրված ցուցանիշի 66%-ը: Դիտարկված շեղումը հիմնականում պայմանավորված է հինգ առևտրային բանկերի ծրագրված ցուցանիշների շեղումով:

2010թ. ընթացքում ֆիզիկական անձ հաճախորդների աճը ըստ առևտրային բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի ամփոփ արդյունքների պետք է կազմի մոտ 229000: Ընդ որում գերակշիռ մասնաբաժին են կազմում երկու առևտրային բանկերի ցուցանիշները, որոնք ընդհանուր նախատեսում են ներգրավել մոտ 107000 հաճախորդ: Եվս յոթ առևտրային բանկերի կանխատեսումների համաձայն՝ ֆիզիկական անձ հաճախորդների քանակը ընդհանուր արդյունքներով կավելանա 97000: Մնացած 13 առևտրային բանկերի ամփոփ արդյունքներով ֆիզիկական անձ հաճախորդների քանակը բանկային համակարգում կավելանա մոտ 25000: 2010թ. ընթացքում բանկային համակարգում սպասարկվող իրավաբանական անձ հաճախորդների աճը ըստ առևտրային բանկերի կանխատեսումների պետք է կազմի մոտ 11000: Վերը նշված առաջին և երկրորդ խումբ բանկերին համապատասխանաբար բաժին են ընկնում 3800 և 3700 իրավաբանական անձ հաճախորդներ: Մնացած մասը համաչափորեն պետք է ապահովեն երրորդ խմբում ընդգրկված 13 առևտրային բանկերը:

2010թ. համար դիտարկվող հաճախորդների քանակի աճի միտումները նախորդ տարվա համեմատությամբ պետք է շարունակվեն նաև ծրագրվող հաջորդ տարիների ընթացքում (Գծապատկեր 2):


	Զարգացած երկրների միջին ցուցանիշ *	Զարգացող երկրների միջին ցուցանիշ **	Հայաստանի Հանրապետություն			
			Փաստացի	Ըստ ՀՋԾ ցուցանիշների		
			2009թ	2010թ	2011թ	2012թ
1-մասնաճյուղի կողմից սպասարկվող հաշիվների քանակը	1 549	4 316	3 733	4 102	4 222	4 326
*- Ֆրանսիա, Գերմանիա , Իտալիա						
**- Չեխիա, Լատվիա, Լիտվա						

2009թ ընթացքում բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների հաշիվներն աճել են 156991-ով և կազմել է 1541677: Հաճախորդների հաշիվների աճը պայմանավորված չի եղել որևէ առևտրային բանկում հաշիվների քանակի կտրուկ տատանումներով, այն կրել է համընթաց բնույթ բոլոր առևտրային բանկերում:

Ըստ առևտրային բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի 2010թ. ընթացքում բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների հաշիվները պետք է

ավելանան 271000, այդ թվում ֆիզիկական անձանց հաշիվները կազմում են մոտ 253000: Հաճախորդների հաշիվների աճում գերակշիռ դիրք են գրավում երկու առևտրային բանկեր, որոնք միասին նախատեսում են ֆիզիկական անձանց համար բացել և վարել 107000 նոր հաշիվ: Եվս հինգ առևտրային բանկերի կանխատեսումների համաձայն՝ ֆիզիկական անձանց հաշիվների քանակը միասին կավելանա 103000: Մնացած 13 առևտրային բանկերի կանխատեսումների ընդհանուր արդյունքում ֆիզիկական անձանց հաշիվների քանակը բանկային համակարգում կավելանա մոտ 43000: 2010թ. ընթացքում իրավաբանական անձանց հաշիվների աճը ըստ առևտրային բանկերի կանխատեսումների պետք է կազմի մոտ 18000: Վերը նշված առաջին և երկրորդ խումբ բանկերին համապատասխանաբար բաժին են ընկնում 4000 և 6000 իրավաբանական անձանց հաշիվներ: Մնացած մասը համաչափորեն պետք է ապահովեն երրորդ խմբում ընդգրկված 13 առևտրային բանկերը:

	2007թ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ
Հաշիվների քանակը	1 104 400	1 384 686	1 541 677	1 812 982	2 077 362	2 344 666
1- մասնաճյուղին ընկնող հաշիվների քանակը	2 993	3 444	3 733	4 102	4 222	4 326
Բանկի գլխամասի/մասնաճյուղերի քանակը	369	402	413	442	492	542



2010թ համար կանխատեսումների միտումները շարունակվում են նաև յուրաքանչյուր հաջորդ 2-ու տարիների ընթացքում (Գ-ծապատկեր 3):

Այս պարագայում 2012թ. վերջի դրությամբ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների և վերջիններիս հաշիվների քանակի աճը (749808-հաճախորդով և 802989 հաշվով) հիմնականում (73%-ով) պայմանավորված է վերը նշված երկու խումբ բանկերի ռազմավարությունից:

Քարտային բնագավառի զարգացումը առևտրային բանկերի կողմից
Տրամադրված/գործող վճարային քարտերի քանակը

2009թ. տարեվերջի դրությամբ քարտային բնագավառում ընդգրկված են 21 առևտրային բանկեր: Նշված բոլոր բանկերն էլ անդամակցում են «ԱրՔա» քարտային համակարգին և սպասարկում «ԱրՔա» վճարային քարտեր:

Ներկայումս ՀՀ տարածքում գործող միայն մեկ առևտրային բանկ դեռ չի առաջարկում իր ծառայությունները քարտային բնագավառում, սակայն վերջինս իր ռազմավարության համաձայն 2011թ. ընթացքում նախատեսում է արդեն տրամադրել և ապահովել վճարային քարտերի սպասարկումը:

Ըստ առևտրային բանկերի ռազմավարական ծրագրի՝ 2009թ. ընթացքում գործող քարտերի քանակը պետք է ավելանար շուրջ 186000 քարտով: Սակայն 2009թ. վերջի դրությամբ գործող քարտերի քանակը 2008թ. համեմատ ավելացել է 1.3-անգամ (125000

քարտով), որի արդյունքում վճարային քարտերի ընդհանուր քանակը կազմել է 579431: Դիտարկված փաստացի ցուցանիշը էականորեն տարբերվում է բանկերի կողմից ծրագրվածից, որտեղ բացասական շեղումը կազմում է մոտ 61000 քարտ:
2009թ-ին նոր վճարային քարտերի գերակշիռ մասը՝ մոտ 62000 պետք է տրամադրվեր երեք առևտրային բանկերի կողմից: Բայց դրանցից յուրաքանչյուրը տրամադրել է ծրագրված իր քարտերի միայն 70%-ը (ընդհանուր մոտ 42000 քարտ): Քարտային բնագավառում ընդգրկված մյուս 18 առևտրային բանկերը ծրագրել էին 2009թ ընթացքում ընդգրկել նոր քարտապաններ և տրամադրել ևս 124000 քարտեր: Սակայն վերջիններս ընդհանուր առմամբ տրամադրել են մոտ 83000 քարտ՝ գրանցելով իրենց կողմից ծրագրված ցուցանիշի նկատմամբ բացասական շեղում: Այդ թվում առանձնանում են չորս բանկեր որոնք տրամադրել են ընդհանուր առմամբ մոտ 55000 քարտ, յուրաքանչյուրը գերակատարելով իրենց ծրագրված ցուցանիշը 3000-8000 քարտով:

2010թ. ընթացքում առևտրային բանկերը նախատեսում են տրամադրել 193000 քարտեր, որի արդյունքում տարեվերջին գործող վճարային քարտերի քանակը պետք է կազմի 772091:
Ընթացիկ տարում վճարային քարտերի գերակշիռ մասը՝ պետք է տրամադրվի երեք բանկերի կողմից, ընդհանուր առմամբ մոտ 85000 քարտ: Եվս հինգ առևտրային բանկեր, որոնք ունեն որոշակի ակտիվություն քարտային բնագավառում, նախատեսում են տրամադրել յուրաքանչյուրը 15000-20000 ական քարտ: Մնացած տասներեք առևտրային բանկերը նախատեսում են տրամադրել ընդհանուր առմամբ մոտ 37000 քարտ:

Ըստ 2010թ առաջին եռամսյակի ցուցանիշների արդեն տրամադրվել են 32988 նոր քարտեր, և գործող քարտերի ընդհանուր քանակը կազմում է /612419/: Եթե հաջորդ 3 եռամսյակների ընթացքում առևտրային բանկերի կողմից տրամադրվի մոտ 110000 քարտ, ապա 2010թ տարեվերջին կդիտարկվի ծրագրված ցուցանիշի նկատմամբ բացասական շեղում 50000 քարտով:

Համաձայն առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրի հաշվետու տարում քարտերի տրամադրման հետ կապված բանկերի ակտիվությունը պահպանվելու է նաև 2011-2012թթ ընթացքում և շրջանառվող քարտերի քանակը յուրաքանչյուր տարի կշարունակի ավելանալ մոտ 190000-200000 քարտով:

Ըստ 2009թ փաստացի ցուցանիշների առևտրային բանկերի կողմից տրամադրված քարտերի 85%-ը կազմում են հաշվարկային (դեբետային) քարտերը, իսկ 14%-ը վարկային քարտերը: Կանխավճարային քարտերի մասնաբաժինը կազմում է ընդհանուր քարտերի միայն 1%-ը: Այս միտումը դիտարկվում է նաև ծրագրվող 2010-2012թթ համար:

Այսպիսով 2010-2012թթ առևտրային բանկերի ռազմավարական ծրագրերի համաձայն քարտային բնագավառում գերակշռող դիրք են գրավել տասնմեկ առևտրային բանկեր և 2010թ. 2011թ. 2012թ. ծրագրված քանակով վճարային քարտերի տրամադրման ապահովումը կապված է հիմնականում այս բանկերի ռազմավարությունից որոնց մասնաբաժինը կազմում է 90% (Գծապատկեր 4 և 5):

2009թ.-փաստացի	«ԱրՔա» քարտեր	VISA	MASTER CARD	Միջազգային այլ քարտեր*
Շրջանառվող/գործող քարտերի քանակ	282 164	201 589	61 108	34 570
Մասնաբաժինը քանակում %-ով	48.70	34.79	10.55	5.97
Գործառնությունների ծավալը (մլն դրամ)	173 445	151 623	62 331	40 849
Մասնաբաժինը ծավալում %-ով	40.50	35.41	14.55	9.54
Մասնակից բանկերի քանակը	20	11	18	4
*--այդ թվում՝ HSBC debit քարտեր, AMEX և այլն				

Ըստ դիտարկված միտումների և ռազմավարական ծրագրերի յուրաքանչյուր առևտրային բանկ ձգտում է անդամակցել բոլոր 3 քարտային վճարային համակարգերի («ԱրՔա», VISA, MASTER CARD):

Միաժամանակ քարտերից օգտվող ֆիզիկական անձ հաճախորդները կազմում են քարտապանների ընդհանուր քանակի մոտ 99.6%, իսկ իրավաբանական անձինք կազմում եմ միայն 0.4%-ը: Ըստ առևտրային բանկերի՝ իրավաբանական անձանց կողմից քարտերի օգտագործումը լայն տարածում դեռ չի ստանում:

	Զարգացած երկրների միջին ցուցանիշ *	Զարգացող երկրների միջին ցուցանիշ **	Հայաստանի Հանրապետություն			
			Փաստացի	Ըստ ՀԶԾ ցուցանիշների		
			2009թ	2010թ	2011թ	2012թ
1000- բանկչությանը ընկնող քարտերի (շրջանառվող) քանակը	1 371	794	180	240	309	379
*- Ֆրանսիա, Գերմանիա , Իտալիա						
**- Չեխիա, Լատվիա, Լիտվա						

Վճարային քարտերի սպասարկման միջոցներ

ՀՀ տարածքում քարտերի սպասարկումը ընդլայնելու նպատակով 2009թ. ընթացքում բանկերի կողմից տեղադրվել է 164 նոր ավտոմատ գանձման մեքենա (ընդհանուր քանակը կազմել է՝ 702) և 440 ՊՈՍ-տերմինալ (ընդհանուր քանակը կազմել է՝ 2720 այդ թվում 438-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում): ՀՀ մարզերում տեղադրված ավտոմատ գանձման մեքենաների և ՊՈՍ-տերմինալների քանակը կազմել է համապատասխանաբար 242-ԱԳՄ և 425- ՊՈՍ:

2009թ. վերջի դրությամբ փաստացի շահագործվող ԱԳՄ-ների և ՊՈՍ-տերմինալների ընդհանուր քանակի 70%-ը տեղադրված է ինը առևտրային բանկերի կողմից: Նախորդ տարվա համեմատությամբ նշված բանկերը շարունակել են ծավալել ակտիվ գործունեություն և պահպանել իրենց գերակշռող դիրքը այս բնագավառում:

Համաձայն բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի 2010-2012թ-ի ընթացքում շարունակվելու է նոր սարքավորումների տեղադրումը: Բանկերի կողմից յուրաքանչյուր տարի նախատեսվում է տեղադրել 190-210 ավտոմատ գանձման մեքենա (այդ թվում՝ մոտ 80 ԱԳՄ ՀՀ մարզերում) և 1400-1800 ՊՈՍ-տերմինալ (այդ թվում՝ մոտ 180-200-ը ՀՀ մարզերում): Ընդ որում չորս բանկերի կողմից նախատեսվում է 2010թ. ընթացքում և հետագայում՝ յուրաքանչյուր տարի տեղադրել ընդհանուր առմամբ մինչև 80-100 ԱԳՄ, որից 40-ը ՀՀ մարզերում: Եվս հինգ առևտրային բանկեր ըստ ամփոփ ցուցանիշների նախատեսում են յուրաքանչյուր տարի տեղադրել մոտ 55 ԱԳՄ՝ (որից ընդհանուր առմամբ 25 ԱԳՄ կտեղադրվի ՀՀ մարզերում): Քարտային ծառայությունների մատուցման նպատակով յուրաքանչյուր տարի մինչև 5-ական ԱԳՄ-ներ (այդ թվում՝ ՀՀ մարզերում մինչև 2-ական ԱԳՄ) կտեղադրեն երրորդ խումբը կազմող 11 առևտրային բանկերը: Միայն երկու առևտրային բանկեր չեն նախատեսում ԱԳՄ-ների տեղադրում 2010-2012թթ ընթացքում:

ՊՈՍ-տերմինալների տեղադրման և քարտերի սպասարկման ցանցը ընդլայնելու հետ կապված հեռանկարային զարգացման ծրագիր են ներկայացրել քարտային բնագավառում ընդգրկված 21 առևտրային բանկեր, որից առավել ակտիվ գործունեություն են նախատեսում իրականացնել 11 բանկեր: Չորս առևտրային բանկեր նախատեսում են 2010թ. և հետագայում յուրաքանչյուր տարի տեղադրել մոտ 700-800 ՊՈՍ-տերմինալ (այդ թվում՝ յուրաքանչյուր տարում 80-110 ՊՈՍ-տերմինալ ՀՀ մարզերում): Երկրորդ խումբը կազմող 7 առևտրային բանկեր նախատեսում են տարեկան տեղադրել 450-550 ՊՈՍ-տերմինալ (այդ թվում ՀՀ մարզերում տարեկան կտեղադրվի 50-80 ՊՈՍ-տերմինալ): Մնացած իննը առևտրային բանկերը, որոնք կազմում են երրորդ խումբը, նախատեսում են յուրաքանչյուր տարի ընդհանուր առմամբ 100-140 ՊՈՍ-տերմինալների տեղադրում, որից մինչև 15 ՊՈՍ-տերմինալներ կտեղադրվեն ՀՀ մարզերում՝ միայն չորս առևտրային բանկերի նախաձեռնությամբ:

Առևտրային բանկերի կողմից նախատեսված հեռանկարային զարգացման ծրագրերի իրագործման դեպքում 2009թ. դեկտեմբերի դրությամբ շահագործվող 702 ԱԳՄ-ների և 2720 ՊՈՍ-տերմինալների փոխարեն 2012թ. տարեվերջին ՀՀ-ում կշահագործվի ընդհանուր առմամբ մոտ 1279 ԱԳՄ (այդ թվում 808-ը ք. Երևանում) և 7258 ՊՈՍ-տերմինալ (այդ թվում 6265-ը ք. Երևանում) (Գծապատկեր 6 և 7):
2010-2012թ.թ. ընթացքում առևտրային բանկերի կողմից նախատեսված քանակությամբ նոր քարտերի տրամադրման, ինչպես նաև նոր սարքավորումների (ԱԳՄ-ներ, ՊՈՍ-տերմինալներ) տեղադրման դեպքում՝ 2012թ. տարեվերջին 1 ԱԳՄ-ի կողմից սպասարկման ենթակա քարտերի քանակը կկազմի մոտ 956 քարտ, իսկ 1 ՊՈՍ-տերմինալի համար՝ 168 քարտ: Ըստ միջազգային չափանիշների 1-ԱԳՄ-ի սպասարկման քարտերի քանակը պետք է կազմի մինչև 2600, իսկ 1- ՊՈՍ-տերմինալինը՝ 160 քարտ:

	Զարգացած երկրների միջին ցուցանիշ *	Զարգացող երկրների միջին ցուցանիշ **	Հայաստանի Հանրապետություն			
			Փաստացի	Ըստ ՀԶԾ ցուցանիշների		
			2009թ	2010թ	2011թ	2012թ
1մլն- բնակչությանը սպասարկող ԱԳՄ-ների. քանակը	702	328	218	283	337	397
1մլն- բնակչությանը սպասարկող ՊՈՍ տերմինալների. քանակը	14 115	5 641	844	1 405	1 804	2 252
*- Ֆրանսիա, Գերմանիա , Իտալիա						
**- Չեխիա, Լատվիա, Լիտվա						

Ըստ 2010թ առաջին եռամսյակի ցուցանիշների առևտրային բանկերի կողմից արդեն տրամադրվել է 34 նոր ԱԳՄ-ներ և 95 ՊՈՍ-տերմինալներ: Եթե հաջորդ եռամսյակների ընթացքում առևտրային բանկերի կողմից սարքավորումները տեղադրվեն նույն ակտիվությամբ, ապա 2010թ տարեվերջին առևտրային բանկերը պակաս կտեղադրեն համապատասխանաբար 90 ԱԳՄ-ներ և 1500 ՊՈՍ-տերմինալներ:
2009թ. ընթացքում առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով ՀՀ տարածքում և արտասահմանում կատարված գործառնությունների ծավալը կազմել է 433 մլրդ դրամ, որի 89%-ը կազմում են կանխիկացման գործառնությունները:

	Փաստացի	Ըստ ՀՋԾ ցուցանիշների		
	2009թ	2010թ	2011թ	2012թ
Շրջանառվող/գործող քարտերի քանակը	579 431	772 091	996 278	1 222 758
Կանխիկացում՝ ՀՀ տարածքում և արտասահմանում (մլն դրամ)	387 825	474 150	557 536	650 548
Անկանխիկ գործառնություններ տերմինալներով՝ՀՀ տարածքում և արտասահմանում (մլն դրամ)	39 339	47 500	60 146	74 174
1- քարտով ամսական կանխիկացման գործառնությունների միջին ծավալը (մլն դրամ)	0.056	0.051	0.047	0.044
1- քարտով ամսական անկանխիկ գործառնությունների միջին ծավալը (մլն դրամ)	0.006	0.005	0.005	0.005

Ըստ առևտրային բանկերի ծրագրված ցուցանիշների քարտային գործառնությունների ծավալը յուրաքանչյուր տարի կշարունակի ավելանալ 15-20%: Ընդ որում քարտային գործառնությունների ընդհանուր ծավալում կանխիկացման գործառնությունները կնվազեն տարեկան 1%-ով (Գծապատկեր 8):

Նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը
(բանկ-հաճախորդ համակարգեր)

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից նոր տեխնոլոգիաների, մասնավորապես բանկ-հաճախորդ համակարգերի շահագործման և զարգացման հետ կապված աշխատանքներ են տարվել 19 առևտրային բանկերի կողմից: Մյուս 3 առևտրային բանկերը չեն նախատեսում մինչև 2012թ ստեղծել և ներդնել այդպիսի համակարգեր: Բանկերի կողմից հաճախորդների հեռահար սպասարկման համակարգերը դասակարգվում են հետևյալ տեսակների՝ Բանկ-հաճախորդ համակարգեր, Ինտերնետ-բանկինգ, Հեռախոսային-բանկինգ, Մոբիլ-բանկինգ: 2009թ ընթացքում դիտարկվել է հեռահար սպասարկման համակարգերի միջոցով մատուցվող ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ հաճախորդների կտրուկ աճ՝ մոտ 20000-ով, որը հիմնականում պայմանավորված է այս բնագավառում երկու բանկերի գործունեությամբ:

2009թ. վերջի դրությամբ առևտրային բանկերի կողմից առաջարկվող հեռահար սպասարկման համակարգերից օգտվող հաճախորդների քանակը կազմել 23914, այդ թվում 3046-ը հանդիսանում են իրավաբանական անձ:

Ըստ 2010-2012թթ ռազմավարական ծրագրերի, առևտրային բանկերը նախատեսում են ակտիվացնել հեռահար սպասարկման համակարգերի միջոցով ծառայությունների մատուցումը և ընդգրկել նոր հաճախորդներ:

Ընդհանուր առմամբ մինչև 2010թ.-ի տարեվերջ բանկ հաճախորդ համակարգերով սպասարկվող հաճախորդների քանակը յուրաքանչյուր տարի պետք է ավելանա մոտ 4000- հաճախորդով:

Այս բնագավառում առավել ակտիվ է նախատեսում գործել 1 առևտրային բանկ, որը ծրագրում է յուրաքանչյուր տարի բանկ-հաճախորդ համակարգերից օգտվող հաճախորդների քանակը ավելացնել միջինում 2000 հաճախորդով, (որի 90%-ը կհանդիսանան ֆիզիկական անձիք):
Եվս 4 առևտրային բանկերի կողմից բանկ-հաճախորդ համակարգերի միջոցով առաջարկող ծառայություններից օգտվում են ընդհանուր առմամբ 7300 հաճախորդ (այդ թվում 550 իրավաբանական անձ): Նշված բանկերը նախատեսում են 2010-2012թթ. բանկ-հաճախորդ համակարգերից օգտվող հաճախորդների քանակը յուրաքանչյուր տարի ավելացնել ընդհանուր առմամբ 1800-ով, որից մոտ 70% կհանդիսանան ֆիզիկական անձիք: Երրորդ խումբը կազմող 14 առևտրային բանկերից յուրաքանչյուրը նախատեսում են մինչև 2012թ. ամեն տարի ընդգրկել բանկ-հաճախորդ համակարգերից օգտվող 20-80 հաճախորդ, որի մոտ 50% կկազմեն ֆիզիկական անձ հաճախորդներ (Գ-ծապատկեր 9): Արդյունքում ՀՀ բանկերում բանկ-հաճախորդ համակարգերից օգտվող հաճախորդների քանակը 2012թ. պետք է կազմի 37000 (2012թ. դրությամբ ծրագրված ցուցանիշի՝ բանկերում սպասարկվող հաճախորդների քանակի 2.5%-ը):
2010թ. ընթացքում առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրերի համաձայն բանկերի մոտեցումը բանկ-հաճախորդ համակարգերի զարգացման նկատմամբ կրում է իրատեսական բնույթ:
ՀՀ տարածքում գործող հեռահաղորդակցման կապի օպերատորների կողմից 2009թ ընթացքում ինտերնետ ծառայությունների սակագների որոշակի իջեցման արդյունքում այս ծառայության ակտիվացումը իր հերթին կարող է նպաստել բանկ-հաճախորդ համակարգերից օգտվող հաճախորդների քանակի ավելացմանը:
Առևտրային բանկերի կողմից հեռահար սպասարկման համակարգերով մատուցվող ծառայությունների զարգացման խթան կարող է հանդիսանալ նաև այս ոլորտի իրավական դաշտի կարգավորումը, որի հետ կապված ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարվում են համապատասխան աշխատանքներ:

	Բանկ-հաճախորդ	Ինտերնետ-բանկինգ	Հեռախոսային-բանկինգ
2009թ. ընթացքում վճարումների ծավալը (մլն դրամ)	2283117	72458	1052

2009թ. ընթացքում «Բանկ-հաճախորդ» համակարգերի միջոցով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 2357 մլրդ դրամ: Առևտրային բանկերի կողմից ծրագրվում է յուրաքանչյուր տարի այս համակարգերով իրականացվող գործառնությունների ծավալի աճ 16%-ով(Գ-ծապատկեր 10):

Միջազգային դրամական փոխանցումներ

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից իրականացված միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալը 2009թ. ընթացքում նվազել է 17%-ով (181 մլրդ դրամով) և կազմել 856 մլրդ դրամ (այդ թվում՝ դեպի արտասահման փոխանցումները-276 մլրդ դրամ, իսկ դեպի Հայաստանի Հանրապետություն-579 մլրդ դրամ): Ֆիզիկական անձանց ստացումները արտասահմանից նախորդ տարվա համեմատ նվազել են 16%-ով, իսկ դեպի արտասահման միջազգային փոխանցումները նվազել են 19%-ով: Միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալի 37%-ը կատարվել է մեկ բանկի միջոցով, իսկ 39%-ը կատարվել է հինգ բանկերի միջոցով: Երրորդ խումբ կազմող 16 առևտրային բանկերը ապահովել են մնացած 24%-ը: Ֆիզիկական անձանց փոխանցումներում և ստացումներում դիտարկվող զուտ ներհոսքը կազմում է 303 մլրդ դրամ, որը նվազել է 14%- ով:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի արդյունքում 2009թ ընթացքում ՀՀ տարածքում դիտարկված ֆիզիկական անձանց փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալի նվազումը առավելապես մեծ ազդեցություն է ունեցել հինգ առևտրային բանկերի վրա:

2009թ. ընթացքում իրավաբանական անձանց կողմից իրականացված միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալը կազմել է 4328 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ դեպի արտասահման փոխանցումները-2360 մլրդ դրամ, իսկ դեպի Հայաստանի Հանրապետություն-1967 մլրդ դրամ): Իրավաբանական անձանց միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալի 68%-ը կատարվել է հինգ բանկերի միջոցով: Եվս 21%-ը կատարվել է հինգ բանկերի միջոցով, յուրաքանչյուրը 3-5%: Երրորդ խումբ կազմող 12 առևտրային բանկերը ապահովել են իրավաբանական անձանց փոխանցումների 11%-ը: Իրավաբանական անձանց փոխանցումներում և ստացումներում դիտարկվում է զուտ արտահոսք որը կազմում է 393 մլրդ դրամ: Վերջինս էականորեն կապված է այն հանգամանքով, որ ՀՀ տնտեսության մեջ գերակշռում է ներմուծման ճյուղը: 2009թ ընթացքում ներմուծման ծավալը կազմել է 1212 մլրդ դրամ, իսկ արտահանման ծավալը կազմել է 257 մլրդ դրամ:

ՀՀ տարածքում գործող բոլոր առևտրային բանկերը ծրագրավորվող տարիների (2010թ., 2011թ., 2012թ.) համար նույնպես կանխատեսում են ֆիզիկական անձանց միջազգային փոխանցումների և ստացումների աճ: Յուրաքանչյուր տարվա ընթացքում նախորդ ժամանակահատվածի համեմատ կանխատեսվում է ֆիզիկական անձանց դեպի արտասահման և դեպի Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալի աճ՝ մոտ 10%-12%, ընդ որում դրամական միջոցների արտահոսքի և ներհոսքի հարաբերակցությունը կազմում է 1:2 և հետագա ժամանակահատվածներում չի փոփոխվում: Ֆիզիկական անձանց դեպի Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում 2010թ. համար աճը կազմում է մոտ 70 մլրդ ՀՀ դրամ: Նույն մակարդակը կանխատեսվում է նաև յուրաքանչյուր հաջորդ տարիների համար: Միևնույն ժամանակ դեպի արտասահման փոխանցումների համար կանխատեսվում է աճ 40-50 մլրդ դրամով:

2010-2012թթ. կանխատեսվող փոխանցումների ծավալում առանձնանում են երեք առևտրային բանկեր, որոնք նախատեսում են դեպի Հայաստանի Հանրապետություն փոխանցումների բավական մեծ աճ՝ մոտ 35-45 մլրդ դրամ ծավալով և դեպի արտասահման՝ 18-20 մլրդ դրամ ծավալով:

Երկրորդ խումբը կազմող 13 առևտրային բանկերը յուրաքանչյուր տարվա համար կանխատեսում են դեպի Հայաստանի Հանրապետություն կատարվող փոխանցումների ծավալի աճ ընդհանուր առմամբ մոտ 20-30 մլրդ դրամ, իսկ դեպի արտասահման մոտ 25-30 մլրդ դրամ: Առևտրային բանկերի կողմից 2010թ ընթացքում, ֆիզիկական անձանց փոխանցումների նվազում չի կանխատեսվում (Գծապատկեր 11 և 12):

Միևնույն ժամանակ 2010թ. առաջին եռամսյակի ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիտարկվել է ֆիզիկական անձանց ստացումների ծավալի աճ 18%-ով և կազմել 102 մլրդ դրամ: Եթե 2010թ. հաջորդ եռամսյակների ընթացքում աճի միտումը պահպանվի նույն մակարդակի վրա, ապա տարեվերջին ֆիզիկական անձանց ստացումների ծավալը կկազմի 684 մլրդ դրամ, 2009թ. ընթացքում դիտարկված 579 մլրդ դրամ ստացումների դիմաց: Այս դեպքում առևտրային բանկերի ծրագրված ցուցանիշի նկատմամբ կդիտարկվի դրական շեղում 5%-ի չափով (35 մլրդ դրամ): Յուրաքանչյուր առևտրային բանկ ձգտում է անդամակցել մի քանի դրամական փոխանցում իրականացնող համակարգերի ընդլայնելով իր կողմից փոխանցումների իրականացման սպասարկման կետերի քանակը և աշխարհագրական կառուցվածքը: Մասնավորապես 2009թ ընթացքում առևտրային բանկերը անդամակցել են 2 նոր համակարգերի (INTEL EXPRESS, RIA MONEY TRANSFER) և միաժամանակ ընդլայնվել է 6 համակարգերի (ANELIK, CONTACT, MIGOM, BISTRAYA POCHTA, MONEY GRAM, LIDER, BLIZKO) անդամակցող բանկերի քանակը: Ընդհանուր առմամբ տեղի է ունեցել ՀՀ տարածքում գործող համակարգերի հետ 30-նոր անդամակցություն:

Վերը նշված միտումները հիմք են տալիս պնդելու, որ միջազգային փոխանցումների հետ կապված առևտրային բանկերի ծրագրված ցուցանիշները 2010թ.-2012թ. համար կրում են որոշակի իրատեսական բնույթ:
2010-2012թթ. համար առևտրային բանկերի կողմից ռազմավարական ծրագրով ներկայացված իրավաբանական անձանց կողմից դեպի արտասահման իրականացվող փոխանցումների ցուցանիշներում նույնպես յուրաքանչյուր տարվա համար դիտարկվում է 12%-14% աճ, նախորդ ժամանակահատվածի համեմատ: Ընդ որում իրավաբանական անձանց դեպի արտասահման կատարվող փոխանցումները յուրաքանչյուր տարի 1.2 անգամ կգերազանցեն վերջիններիս ստացումներին:

Ամփոփում

2009թ. ընթացքում առևտրային բանկերի գործունեությունը վճարահաշվարկային բնագավառում հիմնականում ուղղված է եղել.

- քարտային բնագավառի զարգացմանը և նոր ծառայությունների ներդրմանը- (Նոր ԱԳՄ-ների տեղադրում և միացում «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնին՝ GPRS-սկզբունքով կամ CBANet-ցանցով: Շահագործվող ԱԳՄ-ների տեխնիկածրագրային ապահովման վերազինում, չիպային քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված աշխատանքների իրականացում, կատարված գործարքների վերաբերյալ SMS-հաղորդագրության միջոցով քարտապանին տեղեկացում ստանալու ծառայության ներդրում, քարտային հաշվի վերաբերյալ SMS-հաղորդագրության միջոցով քաղվածք ստանալու ծառայության ներդրում, «Cash-in» (կանխիկի ընդունման) ծառայության ներդրման նպատակով աշխատանքների իրականացում),
- անդամակցություն միջազգային դրամական փոխանցումների համակարգերին (տարբեր համակարգերի անդամակցելու նպատակով առևտրային բանկերին տրամադրվել է թույլտվություն)
- «բանկ-հաճախորդ» համակարգերի զարգացմանը-իրականացվել են բանկի կողմից շահագործվող համակարգի տեխնիկածրագրային ապահովման վերազինման աշխատանքներ:
- մասնաճյուղային ցանցի զարգացում և աստիճանական անցում առցանց սկզբունքով մասնաճյուղերի միացմանը բանկի գլխամասային բաժանմունքի հետ:
- ISO: 9001-2000--որակի կառավարման միջազգային ստանդարտի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում:

Առևտրային բանկերի կողմից 2010-2012թթ. համար ներկայացված հեռանկարային զարգացման ծրագրի համաձայն վճարահաշվարկային բնագավառում առավել ակտիվ գործունեություն են նախատեսում իրականացնել 9-ը առևտրային բանկեր:

2010-2012թթ. ընթացքում առևտրային բանկերը նախատեսում են ընդլայնել իրենց հաճախորդներին առաջարկվող վճարահաշվարկային ծառայությունների ցանկը: Սակայն պետք է նշել, որ առևտրային բանկերը իրենց կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների ցանկով և դրանց մատուցման որակով գտնվում են տարբեր մակարդակների վրա: Այդ տեսանկյունից ավելի ցածր մակարդակում գտնվող բանկի կողմից նոր ծառայության ներդրումը չի հանդիսանում նորամուծություն ՀՀ բանկային համակարգի համար, այլ միայն ուժեղացնում է բանկերի միջև մրցակցությունը այս բնագավառում: Օրինակ՝ ոչ բոլոր բանկերի կողմից է առաջարկվում չիպային քարտերի տրամադրում, կամ SMS-հաղորդագրության միջոցով քաղվածք է տրամադրվում քարտային հաշվի վերաբերյալ: Հետևաբար այս ծառայությունների ներդրումը որոշ բանկերի համար կհանդիսանա նորամուծություն և միաժամանակ կնպաստի քարտային բնագավառում ընդգրկված բանկերի միջև մրցակցության ուժեղացմանը:

Առևտրային բանկերը 2010-2012թթ. համար նախագծված իրենց ծրագրերով նախատեսում են.

- Ընդլայնել մասնաճյուղային ցանցը, ներգրավել նոր հաճախորդներ.
- Անդամակցել միջազգային քարտային վճարային համակարգերին (Visa, Mastercard, AMEX) և ակտիվացնել բանկի դերը քարտային բնագավառում տրամադրելով և սպասարկելով ArCa, Visa, Mastercard, AMEX –քարտային համակարգերի քարտեր:
- «Առանց հպման» սկզբունքով գործող («Безкантактные») վճարային քարտերի թողարկում:
- Բանկի կողմից «Նվեր»-քարտերի, «Սպառողական»-քարտերի, կանխավճարային (Prepaid)- քարտերի թողարկում և սպասարկում:
- «Cash-in» (կանխիկ ընդունող) ԱԳՄ-ների տեղադրում և այդ ծառայության մատուցում:
- ԱԳՄ-ների սերտիֆիկացում «Չիպ»-երի սպասարկման համար:
- Չիպային քարտերի սպասարկում ԱԳՄ-ների և ՊՈՍ-տերմինալների միջոցով:
- ԱԳՄ-ների միջոցով քարտից-քարտ փոխանցումների կատարում, վարկերի մարում և այլ ծառայությունների մատուցում :
- Սեփական պրոցեսինգային կենտրոնի ստեղծում:
- Mobile banking համակարգի ներդրում:
- eCard-banking համակարգի ներդրում ինտերնետի միջոցով քարտային գործարքների կատարման համար:
- Քարտային գործարքների վերաբերյալ քարտապաններին SMS-հաղորդագրությունների ուղարկման համակարգի ներդնում:
- ArCa քարտային համակարգի և դրամական փոխանցումների համակարգի ինտեգրացում:
- Արտարժույթի ավտոմատ փոխանակման սարքերի տեղադրում և ցանցի ընդլայնում:
- Անդամակցում միջազգային դրամական փոխանցումների համակարգերի (այդ թվում՝ Contact, Money Gram, Быстрая почта, Migom, Inter Express, Instant Cash Global Money Transfer, Zolotaya korona և այլն):
- On-Line կապի ներդնում (ներդրման շարունակում) գլխամասի և մասնաճյուղերի միջև:
- «Բանկ-հաճախորդ» համակարգերի ներդրում, ինչպես նաև նմանատիպ գործող համակարգի զարգացում:
- Առևտրային բանկերի կողմից նախատեսվում է նաև ISO: 9001-2000--որակի կառավարման միջազգային ստանդարտի ներդրում:

Նախորդ տարվա համեմատ առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրերում նախանշված՝ վճարահաշվարկային բնագավառում մատուցվող ծառայությունների ընդլայնման և նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված էական փոփոխություններ չեն դիտարկվել:

Կից ներկայացվում են՝ Հավելվածներ 8 էջ, և ամփոփված տվյալներ «Բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ պայմանավորված կանխատեսվող ցուցանիշների վերաբերյալ» 4 էջ: